

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

**ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ
21-ՐԴ ԴԱՐՈՒՄ
ՊԱՏՆԵՇՆԵՐ
ՍՏԵՂԾԵԼ
ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ...**





ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

**«ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԴԱՏՆԵՆՆԵՐ
ՍՏԵՂԾԵԼ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ...»**

Հայաստանը և Թուրքիան
տարածաշրջանային հոլովույթներում

2001-2003 թվականների հոդվածներ ու հարցազրույցներ



РУБЕН САФРАСТЯН

**“НЕВОЗМОЖНО В 21-м ВЕКЕ СОЗДАВАТЬ
БАРЬЕРЫ МЕЖДУ СОСЕДЯМИ...”**

Армения и Турция
в региональных процессах

Статьи и интервью 2001-2003 годов



RUBEN SAFRASYAN

**«IT IS IMPOSSIBLE TO SET UP BARRIERS
BETWEEN NEIGHBORS IN THE XXI CENTURY...»**

Armenia and Turkey
in Regional Developments

Articles and Interviews of 2001-2003



ԵՐԵՎԱՆ YEREVAN

2 0 0 3



ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4
Ս 305

Սաֆրաստյան Ռուբեն
Ս 305 «Հնարավոր չէ 21-րդ դարում պատմեչներ ստեղծել հարևանների միջև.....»:
- Եր.: Զանգակ-97, 2003. - 96 էջ:

Ժողովածուն ընդգրկում է հեղինակի վերջին տարիների գիտական հոդվածները, գրախոսականները և հարցազրույցները՝ նվիրված հայ-թուրքական հարաբերություններում առկա հիմնահարցերին, ինչպես նաև Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության այլևայլ դրսևորումներին:

Նախատեսված է ինչպես մասնագետների, այնպես էլ ընթերցողների լայն շրջանակների համար:

Ս 0802000000 2003
0003(01)-2003

ԳՄԴ 66.4

ISBN 99930-2-665-4

© Սաֆրաստյան Ռ., 2003

© «Զանգակ-97», 2003

2001

Թ Վ Ա Կ Ա Ն

ԹՈՒՐԵԻԱՅԻ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԻՅ ՅԵՏՈ

ԱՄՆ-ի դեմ ուղղված 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունները սկիզբ դրեցին կարևոր ու բազմաբնույթ փոփոխությունների միջազգային հարաբերությունների համակարգում: Թերևս, դրանցից ամենակարևորներից է Ռուսաստանի ընդգրկումը ԱՄՆ-ի գլխավորած հակաահաբեկչական կոալիցիայի մեջ, որը հաստատուն կերպով մատնանշում է այն փաստը, թե որքան խորը փոփոխություններ են կրել Արևմուտքի և Ռուսաստանի հարաբերությունները սառը պատերազմից հետո: Ավելի ընդարձակ պատմական հեռանկարի առումով, այս փոփոխությունները նշանակում են իս մեկ քայլ ետսառըպատերազմյան աշխարհաքաղաքական կարգի ձևավորման ուղղությամբ:

Ներկա ճգնաժամը, լինելով, ըստ էության, գլոբալ, տարածքային առումով նախևառաջ ծավալվում է Եվրասիայում և այս հանգամանքի շնորհիվ ներգրավում է իր ոլորտի մեջ՝ որպես կարևոր գերակատարներ նաև այդ տարածաշրջանի պետությունները: Ընթացող գործընթացներում Թուրքիային վերապահված կարևոր դերակատարությունը պայմանավորված է Եվրասիայում նրա քաղաքական, տնտեսական ու ռազմական կշիռով ու ներգրավվածության աստիճանով, ինչպես նաև այն հանգամանքով, որ այդ երկիրը պատմական, մշակութային, կրոնական ու էթնիկական կապեր ունի տարածաշրջանի շատ ժողովուրդների հետ:

Մինչ այժմ ռազմական գործողությունները ընթացել են Թուրքիայի սահմաններից հեռու և ներկա փուլում դեռևս պարզ չէ, թե Թուրքիան առաջիկա ամիսների՝ հավանաբար նաև տարիների ընթացքում ինչպիսի դեր է ունենալու միջազգային ահաբեկչության դեմ ծավալվող պայքարում: Անկախ ապագա զարգացումների արդյունքներից, կարելի է կանխատեսել, որ սույն հակամարտությունը փոփոխություններ է մտցնելու եվրասիական և արևմտյան երկրների հետ Թուրքիայի հարաբերություններում և անգամ կարող է նպաստել աշխարհաքաղաքական նոր կարգի ձևավորման ընթացքում Թուրքիայի դերակատարության շրջանակների վերասահմանմանը:

1

Եվրասիան 1990-ականների Թուրքիայի քաղաքական մտքում ու քաղաքականության մեջ. աշխարհաքաղաքական պատկերացումներ և քաղաքական մոտեցումներ

Ինչպես արդեն նշել էինք, ընթացող ճգնաժամի գլխավոր թատերաբեմը Եվրասիան է: Այդ պատճառով իմաստ ունի անդրադառնալ այդ հասկացողության

ընկալումներին ու մեկնաբանություններին ժամանակակից թուրքիայի քաղաքական ու գիտական շրջանակներում:

90-ական թվականների սկզբից Եվրասիա հասկացողությունը կարևոր տեղ է զբաղեցնում թուրքիայում ընթացող քաղաքական քննարկումներում: Այն ընկալվում է որպես հիմնական կոնցեպցիա, որը ուրվագծում է թուրքիայի գեոպոլիտիկ ռազմավարությունը, միջազգային հարաբերությունները և ազգային անվտանգությունը: Չնայած դրա կենտրոնական բնույթին կամ գուցե նաև դրա հետևանքով, «Եվրասիա» տերմինը մեծապես քաղաքականացված է և գիտական առումով անորոշ սահմանված: Որոշ քաղաքագետներ և գիտնականներ Եվրասիան համարում են գլխավորապես թյուրքական ժողովուրդներով բնակեցված տարածաշրջան, որի մեջ են մտնում թուրքիան, Բալկանների ու Կովկասի մի մասը, Միջին Ասիայի մասերն ու խորհրդային հանրապետությունները, Ռուսաստանի Կովկասյի շրջանը և Յուրսիսային Աֆղանստանը: Նման մոտեցումները, որոնք ըստ էության, հանդիսանում են պանթյուրքիզմի գաղափարախոսության «արդիականացված» խմբագրություններ, լայն տարածում գտան թուրքական վերնախավի ամենատարբեր շրջանակներում, մասնավորապես 1990-ական թվականների սկզբին: Նրանց տուրք տվեց նույնիսկ այնպիսի սովորաբար զգուշավոր քաղաքական գործիչ, ինչպիսին Սյուլեյման Դեմիրելն է: 1992 թ. սկզբին, այսինքն խորհրդային Միության փլուզումից դեռ մեկ ամիս էլ չանցած, նա, զբաղեցնելով վարչապետի պաշտոնը, ազդարարեց «հսկայան թյուրքական Աշխարհի» ծնունդը, որի սահմանները, ըստ նրա, ձգվում են Ադրիատիկ ծովից մինչև Չինաստան¹:

Սակայն այս եթնիկական-ծագումնաբանական սկզբունքի վրա հիմնված սահմանումը հետագայում, 1990-ական թթ. կեսերից սկսված կորցրեց իր մենաշնորհը և ներկայումս ավելի քիչ է տարածված, քան բացառապես քաղաքական պատկերացումների վրա հիմնված Եվրասիայի բնորոշման այլ տարբերակները: Դրանցից առաջինը, հետևելով ներկայումս Արևմուտքի և Արևելքի որոշ երկրներում տարածում գտած տեսություններին, որոնք գտնում են, որ «սառը պատերազմի» տարիներին զոյություն ունեցած «Կապիտալիստական Արևմուտք - Սոցիալիստական Արևելք» հակամարտությունը ներկայումս փոխարինվել է «Հարուստ Յուրսիս - Աղքատ Հարավ» հակամարտությամբ, Եվրասիան բնութագրում է որպես «Հարավ»՝ ի հակադրումն հարուստ և զարգացած «Յուրսիսի»: Երկրորդ տարբերակի կողմնակիցները Եվրասիայի շրջանակների մեջ ներառում են միայն Հարավային Կովկասի և Միջին Ասիայի ութ նորանկախ պետությունները:

Քաղաքական շրջանառության մեջ է դրված նաև Եվրասիայի զուտ աշխարհագրական բնորոշումը, որը առկա է, օրինակ, թուրքիայի ԱԳՆ-ի վերսայքի վրա՝ «Եվրոպայից՝ Միջին Ասիա ձգվող ընդարձակ լանդշաֆթ»²: Ըստ էության, այդպիսով փորձ է արվում խուսափել հասկացությունը քաղաքականացնելու մեղադրանքներից: Այնուամենայնիվ, թուրք դիվանագետների հետ շուրջ մեկ տասնամյակի ընթացքում մեր բազմաթիվ հանդիպումները թույլ են տալիս եզրակացնել, որ իր առօրյա գործունեության ընթացքում թուրքական դիվանագիտությունը նախընտրում է հենվել ոչ թե պաշտոնական սահմանման վրա, այլ օգտագործում է այն խիստ քաղաքականացված տարբերակը, որը Եվրասիայի

¹ Cumhuriyet, 23 Ocak, 1992:

² Stü. Turkish Foreign Policy, - <http://www.mfa.gov.tr/>.

շրջանակները սահմանփակում է վերոհիշյալ ութ նորանկախ պետություններով: Առաջին հայացքից զուտ վերացական հետաքրքրություն ներկայացնող Եվրասիայի սահմանների բնորոշման խնդիրը խորքում ունի կարևոր նշանակություն՝ ներկա ճգնաժամի ընթացքում թուրքիայի քաղաքականության շարժառիթները բացահայտելու տեսակետից:

Եվրասիայի կոնցեպցիան, որը կենտրոնականներից է գեոպոլիտիակայի բնագավառում, թուրքիայում սկսել է ուսումնասիրվել միայն վերջերս՝ տարածաշրջանային աշխարհաքաղաքական միջավայրի նշանակալի փոփոխությունների հետևանքով: Թուրք տեսաբանները, օգտագործելով արևմտյան դասական գեոպոլիտիկ մոտեցումները (Յ. Ջ. Մակինդերից մինչև Ջ. Բոթզինսկի), փորձել են ստեղծել իրենց ուրույն կոնցեպցիաները:

Երանցից ամենաուշագրավն ու ամբողջականն է Ռամազան Օզեյի կողմից (Մարմարայի համալսարան) առաջ քաշած աշխարհաքաղաքական կոնցեպցիան: Այն կրում է «Թուրքերի գերիշխանության տեսություն» վերնագիրը³: Օզեյի կոնցեպցիայի հիմնական տարրերը կարելի է ամփոփել հետևյալ կերպ. Անատոլիան աշխարհի «միջնաբերդն» է (kale) և Անատոլիայում իշխող երկիրը՝ Թուրքիան, տիրապետելով այդ միջնաբերդին, հնարավորություն ունի իր հսկողություն տակ առնել «ներքին շրջանակի» տարածաշրջանները, որոնք են, ըստ թուրք գիտնականի, Բալկանները, Մերձավոր Արևելքը և Եվրասիան: Ավելին, այդ «ներքին շրջանակի» վրա իշխող պետությունը՝ Թուրքիան, վաղ թե ուշ կառավարելու է աշխարհը, եզրակացնում է հեղինակը: Այսպիսով Օզեյը օրինականացնում է Եվրասիայում Թուրքիայի գերիշխանությունը՝ համարելով այն այդ երկրի աշխարհագրության բնական արդյունք: Ավելի հեռու գնալով՝ նա Եվրասիայում Թուրքիայի գերիշխանությունը դիտում է ոչ թե որպես ինքնանպատակ, այլ ավելի մեծ արդյունքի հասնելու միջոց: Թուրք գեոպոլիտիկների այլ հրապարակումները այսքան ուղղամիտ չեն և այսքան հեռու չեն գնում, սակայն նրանց մեծ մասը նույնպես պաշտպանում է Եվրասիայում Թուրքիայի գերակայության գաղափարը, դիմելով ավելի «նուրբ» ձևակերպումների: Այսպես, օրինակ, Մուսթաֆա Յըլմազը (Չաջեթեփեի համալսարան) նույնպես բնութագրում է Թուրքիան որպես «բնական միջնաբերդ», որը գտնվում է Բալկանների, Կովկասի և Մերձավոր Արևելքի կենտրոնում, ինչը նրան հնարավորություն է տալիս կիրառելու «մի շարք երկընտրանքային տնտեսական, քաղաքական ու ռազմական» քաղաքական մոտեցումներ⁴:

Թուրքիայի՝ «բնական» աշխարաքաղաքական պայմաններից բխող գերակշռող դերը ընդգծելու նպատակով 1990-ական թվականներին գիտական և քաղաքական շրջանառության մեջ է դրվել նաև մեկ այլ հասկացություն՝ «կենտրոնական տերություն»: Համաձայն այդ մոտեցման ջատագողներից Օրալ Սամդերի, Թուրքիան, զիջելով է իր հզորությամբ մի շարք այլ պետությունների և ենթարկվելով «գլոբալ զարգացումների» ազդեցությանը, միաժամանակ, շնորհիվ իր «կենտրոնական տերություն» դիրքի, ինքն է ներագդում այդ զարգացումների վրա⁵:

³ Özey R. Jeopolitik ve Jeostrategik Açidan Türkiye. İstanbul, 1998, s. 57-59.

⁴ Yılmaz M. Türkiye'nin Geo-Stratejisi Açısından Güntümüz Olaylarının Değerlendirilmesi. - Üçüncü 1000'E Girenken Türkiye: Kutlu Doğum Sempozyumu - 1999. Yayına Hazırlayan: Ömer Turan. Ankara, 2000, s. 72.

⁵ Sander O. Turkish Foreign Policy: Forces of Continuity and Change. - Turkish Review, Winter 1993, Volume: 7, Number: 34, pp. 45-46.

Թուրքական ժամանակակից աշխարհադաքական ու քաղաքական մտքի մանրամասն հետազոտումը և քննական վերլուծությունը, լինելով ինքնու-տիքյան կարևոր գիտական խնդիր, դուրս է սույն հոդվածի շրջանակներից: Անդրադարձը վերընշված օրինակներին նպատակ ունի միմյան խտացրագ ձևով ներկայացնել հիմնական միտումները, որոնք ընկալվում և օգտագործվում են տարբեր ուղղվածության քաղաքական ու հասարակական ուժերի կողմից որպես տեսական աջակցություն քաղաքական բանավեճերում ու քննարկումնե-րում, հիմք հանդիսանալով կոնցեպտուալ բնույթի մոտեցումների ձևավորման համար: Անդրադառնանք նրանցից կարևորների բնութագրմանը:

1990-ականներին Թուրքիայի ծախս մտավորականներն ու քաղաքական գործիչները, ինչպես նաև իսլամամետ շատ ուժեր ձևակերպեցին Թուրքիայի եվրասիական քաղաքականության մի այնպիսի տարբերակ, որն, ըստ էության, իրենից ներկայացնում է լիարժեք այլընտրանք «ավանդորեն» արևմտամետ բնութագրվող քեմալիստական արտաքին քաղաքական ռազմավարությանը: Այս մոտեցման հիմքում դրված է «արևմտյան իմպերիալիզմի» դեմ եվրասիա-կան գլխավոր տերությունների՝ Թուրքիայի, Իրանի ու Ռուսաստանի համագոր-ծակցություն գաղափարը: Այս տեսակետն առաջ քաշողները քննադատում են Թուրքիայի արտաքին քաղաքականությունը Արևմուտքի շահերին ստորադաս լինելու և երկրի բուն շահերը անտեսելու համար: Նրանք հանդես են գալիս որ-պես Թուրքիայի՝ Արևմուտքից անկախ արտաքին քաղաքականության կողմնա-կիցներ: Նրանց թվում են ինչպես ծախս, այնպես էլ իսլամամետ մտավորական-ների և քաղաքական շրջանակների նշանավոր ներկայացուցիչներ: Թուրքիայի սոցիալիստական շարժման վետերան Դոդու Փերիմչեքը, որը պաշտպանում է վերոհիշյալ տեսակետը, իր գրքերից մեկի համար չափազանց բնորոշ վերնա-գիր է ընտրել՝ «Եվրասիայի ընտրությունը՝ Թուրքիայի համար անկախ արտա-քին քաղաքականություն»⁶:

Ժամանակակից Թուրքիայի քաղաքական և մտավորական էլիտան այնու-ամենայնիվ հիմնականում արևմտամետ է և հավատարիմ է մնում Աթաթյուրքի ռազմավարական նախընտրությանը: Նրա այդ թևի ներկայացուցիչները պրագ-մատիկ են և քաջատեղյակ, որ Թուրքիան տնտեսապես և քաղաքականապես դեռևս պատրաստ չէ Եվրասիայում միակ քաղաքական գերիշխող ուժի վերած-վել: Այդ պատճառով նրանք Թուրքիայի արտաքին քաղաքականության եվրա-սիական ուղղությունը համարում են Թուրքիա-Արևմուտք հարաբերություննե-րին ստորադաս և ձգտում են Եվրասիայում իրենց քաղաքականությունը կոոր-դինացնել Արևմուտքի՝ մասնավորապես ԱՄՆ-ի նպատակների հետ: Միաժա-մանակ նրանք եվրասիական տարածաշրջանում Թուրքիայի ազդեցության տա-րածումը կարևոր հաղթաթուղթ են համարում Արևմուտքի հետ այնպիսի հարցե-րի սակարկման գործում, ինչպիսին է օրինակ Եվրոպական Միությանը Թուրքի-այի լիիրավ անդամակցությունը կամ Կիպրոսի խնդիրը:

Եվրասիայի վերաբերյալ թուրք բարձրաստիճան ազդեցիկ գիմվորական-ների աշխարհաքաղաքական և գեոստրատեգիական տեսակետների ուսումնա-սիրությունը ցույց է տալիս, որ դրանք շատ ընդհանրություններ ունեն վերևում

⁶ Perinçek D. Avrasya Seçeneği: Türkiye İçin Bagimsiz Dis Politika Istanbul, 1996.

նշված արևմտյան ուղղվածության էլիտայի հայացքների հետ: Ձիմվորականությունը Եվրասիան և նախևառաջ Չարավային Կովկասը դիտում է որպես Թուրքիայի անվտանգության համար վտանգ ներկայացնող անկայուն տարածաշրջան: Վտանգի հիմնական աղբյուր նա համարում է Ռուսաստանի ազդեցությունը և ռազմական ներկայությունը այդ տարածաշրջանում⁷: Այսպիսով, ակնհայտ է, որ զիմվորականության ուշադրությունը գլխավորապես կենտրոնացած է Չարավային Կովկասի երեք հանրապետությունների վրա: Միաժամանակ, նրանք, ինչպես նաև շատ և շատ թուրքական քաղաքական գործիչներ, գտնում են, որ, ինչպես նշել է հանգստի կոչված գեներալ-լեյտենանտ Սադի Երգյուվեն-չը, «Թուրքիան գտնվում է աշխարհի կենտրոնում»⁸:

Վերջին երկու-երեք տարիների ընթացքում թուրք բարձրաստիճան զիմվորականության շրջանում երևան է եկել ամերիկանամետ սպաներից բաղկացած մի խմբավորում, որը միաժամանակ ընդդիմանում է ԵՄ-ի հետ ինտեգրացմանը: Նրանք Եվրասիան դիտում են ոչ թե անկայունության աղբյուր, այլ որպես Թուրքիայի համար կարևոր աշխարհաքաղաքական առավելություն: Չնայած իրենց արևմտամետ կողմնորոշմանը, նրանք այդ տարածաշրջանում կանխատեսում են ուժեղ մրցակցություն եվրոպական տերությունների և հատկապես Գերմանիայի հետ: Այս եզրակացությանն է հանգել, օրինակ, 1998 թ. Թուրքիայի ռազմական ակադեմիաների կողմից կազմակերպված սեմինարին ներկայացված իր գեկուցման մեջ գնդապետ Նազմի Չիզմեչին⁹:

Ներկայիս կռակիցիոն կառավարությունում ԱԳՆ-ն գտնվում է ժողովրդավարական-ձախ Կուսակցության (ԺՁԿ) հսկողության տակ, ուստի հատուկ ուշադրություն անհրաժեշտ է դարձնել այդ կուսակցության ղեկավարների հայացքներին: Ըդհանուր առմամբ նրանք պաշտպանում են Թուրքիայի արտաքին քաղաքականության արևմտյան ուղղվածության ռազմավարությունը, սակայն անում են որոշ վերապահումներ: Օրինակ, 1995 թ. ներկայիս վարչապետ և ԺՁԿ-ի առաջնորդ Բյուլենթ Էջևիրը հանդես էր եկել «Ռեգիոնալ ուղղվածության արտաքին քաղաքականություն» վարելու առաջարկով: Նա գտնում է, որ ապագայում, օգտագործելով Եվրոպայի ու Ասիայի տարրերը, հնարավոր կլինի ստեղծել Եվրասիայի գերտարածաշրջանի պետություններից բաղկացած ընդհանրություն, իհարկե, Թուրքիայի ղեկավարությամբ: Այդ ինտեգրացման գործընթացները նկարագրելու նպատակով նա նույնիսկ առաջարկել օգտագործել հատուկ տերմին՝ *avasyala'ma* - եվրասյականացում¹⁰:

Արտգործնախարար Իսմայիլ Ջեմի, որն նույնպես ներկայացնում է ԺՁԿ-ն, չի խուսափում հրապարակայնորեն և ամենայն հստակությամբ բացահայտել

⁷ Թուրքիայի բարձրագույն զիմվորականության մոտեցումները և ընկալումները լավագույնս արտահայտված են Գլխավոր շտաբի նախքին հրամանատար Նեջիփ Թորունթայի գրքում: *Stu' Torumtay N. Degisen Stratejilerin Odaginda Türkiye. Istanbul, 1996.*

⁸ Ergüvenç S. Turkey's Strategic Importance in Military Dimension: A Regional Balance Holder. - Turkey at the Threshold of the 21st Century: Global Encounters and/vs Regional Alternatives. Ed. By: Mustafa Aydın. Ankara, 1998. p.63. Հեղինակն, ըստ երևույթին, Չայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի անդամ է:

⁹ *Stu* այդ մասին Ögüt K. Avrasya Stratejileri Üzerine. - Aydinlanma 1923, Sayı: 21 (ինտերնետային տարբերակ):

¹⁰ *Stu*, օրինակ, նրա համապատասխան հայտարարությունը, որը տպագրված է հետևյալ պարբերականի էջերում. *Avrasya Dergisi*, II, (ինտերնետային տարբերակ):

Թուրքիայի հեռու գնացող պլանները: Այսպես, օրինակ, ժամանակին նա հայտարարել էր. «Մենք, անտարակույս, կանդամակցենք Եվրոպական Միությանը, սակայն մեր տեսադաշտը ավելի ընդարձակ է: Մեր նպատակն է դառնալ Եվրասիայում որոշումներ կայացնող կենտրոն»¹¹:

Վերևում քննարկված տեսական մոտեցումները ու դատողությունները Եվրասիայի վերաբերյալ, որոնք լայն տարածում են ստացել ժամանակակից Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, պարզորոշ վկայում են, որ այդ տարախաշջանում Թուրքիայի գերիշխանության գաղափարը՝ այս կամ այն հիմնավորմամբ, կիսում են երկրի ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական ու գիտական էլիտաները: Նշենք նաև, որ երկրի բնակչության լայն խավերը նորանկախ պետություններում Թուրքիայի գերիշխանության հաստատումը ընկալում էին, ինչպես գրում են հետազոտողներ Բյուլենթ Գյոքայը և Ռիչարդ Լանգհորնը, որպես հնարավորություն «վերագտնելու անցյալի իրենց մեծությունը»¹²:

1990-ական թթ. Թուրքիան փորձեց իրականացնել Եվրասիայում իր գերիշխանության հաստատման երազանքը: Նա չափազանց ակտիվ էր այդ տարածաշրջանում: Սակայն գործադրած մեծագույն ջանքերը հիմնականում ապարդյուն անցան, թուրքական դիվանագիտությանը չհաջողվեց հասնել ցանկալի արդյունքների: Նա փաստորեն կրեց ծանր պարտություն Կենտրոնական Ասիայում և արձանագրեց միայն սահմանափակ ձեռքբերումներ Կովկասում¹³: 1990-ականների վերջում – 2000-արականների սկզբում շատ թուրք մասնագետների ու քաղաքական գործիչների համար պարզ դարձավ, որ Թուրքիան չի հասել տարածաշրջանում ղեկավար դեր ստանձնելու իր գլխավոր ստրատեգիական նպատակին: Սկսվեցին նոր քաղաքական գծի փնտրտուկները¹⁴:

2

Թուրքիայի արտաքին քաղաքականությունը 2001թ. սեպտեմբերյան մզնաժամի ընթացքում

Սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակման ու դրա դեմ ԱՄՆ-ի հավանական փոխվրեժի կապակցությամբ Թուրքիայի առաջին արձագանքը բնագդային զգուշավորության բնույթ էր կրում: Թուրքիան պաշտոնապես հայտարարեց, որ Վաշինգտոնն ու Անկարան միջազգային ահաբեկչության դեմ պայքարում ունեն ընդհանուր շահեր՝ հրաժարվելով ԱՄՆ-ին օգնելու կոնկրետ խոստումներից: ԱՄՆ-ի հետ համագործակցելու Թուրքիայի վերոհիշյալ հայտարար-

¹¹ Stü. Ögüt K. Avrasya Stratejileri Üzerine. - Aydinlanma 1923, Sayı: 21 (ինտերնետային տարբերակ):

¹² Gökyay B., Langhorn R. Turkey and the New States of the Caucasus and Central Asia. London, 1996.

¹³ 1990-ականների Թուրքիայի Եվրասիական քաղաքականության հետազոտումը սույն հոդվածի խնդիրն է:

¹⁴ Այդ խնդիրներին հանգամանակից անդրադարձել ենք 2001 թ. Stü. Safrastian R. Armenia must get rid of its complex of Russia's younger brother. - The Noyan Tapan Highlights, 2001, 19 July, pp. 6, 8; Safrastian R. Turkey finds it possible to peddle influence in the South Caucasus. - The Noyan Tapan Highlights, 2001, 27 September, pp. 8, 15; ինչպես նաև, Ռ. Սաֆրաստյան. Թուրքիան՝ աշխարհաքաղաքական փնտրտուքի մեջ. - Երկիր, 21 սեպտեմբերի 2001:

րութիւնը կատարվել էր NATO-ի կողմից հաստատված կոլեկտիվ գործողութիւնների կոնտէքստում՝ հենվելով Յուսիսատլանտյան պայմանագրի V հոդվածի վրա: Ըստ այդ հոդվածի փոխադարձ պաշտպանությանը վերաբերող կետի, դաշինքի անդամ որևէ երկրի վրա հարձակման դեպքում անդամ բոլոր երկրները վերջինիս պետք է պաշտպանեն: Ավելի պարտավորեցնող քայլերից թուրքիայի ղեկավարությունը սկզբնական փուլում խուսափում էր: Այս կապակցությամբ հատկանշական է արտգործնախարար Ջեմի հայտարարությունը. «Այս նոր իրավիճակում թուրք ժողովրդի անվտանգությունը ավելի է կարևոր է, քան որևէ այլ բան»¹⁵:

Ուշագրավ է, որ ահաբեկչության դեմ ԱՄՆ-ի պատասխան գործողությունների կապակցությամբ ամերիկացի և թուրք բարձրաստիճան պաշտոնյաների շփումները սկսվեցին բավականին ուշ, ինչը որոշ թուրք մեկնաբանների կարծիքով վկայում է, որ ներկայիս թուրքիայի ղեկավարությունը չի վայելում ԱՄՆ-ի լիովին վստահությունը: Պետքարտուղար Քոլին Փաուսելը Ջեմին հեռաձայնեց միայն սեպտեմբերի 17-ին՝ տեղեկացնելու համար ԱՄՆ-ի գործողությունների հետագա ծրագրի մասին: Միայն դրանից հետո թուրքիայի ղեկավարները հնարավորություն ունեցան ավելի ճշգրիտ հաշվարկել իրենց քաղաքականությունը արագ փոփոխվող իրավիճակում:

Աֆղանստանում հակաահաբեկչական գործողություններ ծավալելու ԱՄՆ-ի որոշման նկատմամբ թուրքիայի ղեկավարության առաջին հրապարակային արձագանքը մտավախություն էր առ այն, որ դա կարող էր բացասական հետևանք ունենալ միջինասիական պետությունների համար: Ավելի ուշ թուրքիայի Գլխավոր Սպայակույտի (ԳՍ) պետ Յուսեյն Քըվրքըօղլուն մի քանի անգամ զգուշացրեց ԱՄՆ-ին՝ Աֆղանստանի լեռներում կռվելու նպատակով չուղարկել ցամաքային զորամիավորումներ, ասելով, թե «այնտեղ ուղարկված ուժերը կորստի են մատնվելու»¹⁶: Նրա ոչպաշտոնական արտահայտությունների այդ թեմայով ավելի կտրուկ էին. Աֆղանստանում ցանկացած ցամաքային գործողություն հավասարազոր է «խեղացնության»¹⁷:

Զնայած այդ վերապահումներին, թուրքիան այնուամենայնիվ հայտնեց իր սկզբունքային պատրաստակամությունը օժանդակել ԱՄՆ-ին հակաահաբեկչության դեմ պատերազմում: Թուրքիայի ղեկավարության հիմնական մտահոգությունն այն էր, թե ինչ ձև է ընդունելու այդ մասնակցությունը: Ըստ երևույթին, քննարկվում էին այնպիսի տարբերակներ, որոնք չէին նախատեսում ուղղակի մասնակցություն ռազմական գործողություններին: Սեպտեմբերի 27-ին արված վարչապետ Էջլիթի հայտարարության համաձայն, թալիբների դեմ ռազմական գործողություններին մասնակցելու նպատակով Աֆղանիստան թուրքական ստորաբաժանումներ ուղարկելու հարց «օրակարագում չկա»¹⁸:

Թե կոնկրետ ինչ աջակցություն պատրաստ էր տրամադրել այդ փուլում թուրքիան ԱՄՆ-ն հայտնի դարձավ ԳՍ պետի տեղակալ Յաշար Բյույուքբանըլըի հայտարարությունից, որոն նա, ի դեպ, հանդես եկավ այն նույն օրը, երբ Վաշինգ-

¹⁵ Hürriyet, Eylül 14, 2001.

¹⁶ Milliyet, Ekim 2, 2001

¹⁷ Star, Ekim 2, 2001

¹⁸ Milliyet, Eylül 28, 2001

տոնում Ջեմը հանդիպում էր Փաուելի հետ, այդպիսով տեղյակ պահելով ԱՄՆ-ի ղեկավարությանը Թուրքիայի բարձրագույն զինվորականության դիրքորոշման մասին: Նա մասնավորապես հայտնեց, թե Թուրքիան ԱՄՆ-ի հետ «կփոխանակի իր ինֆորմացիան ու պատկերացումները և կհամագործակցի անվտանգության բոլոր բնագավառներում»: Այլ կերպ ասած, դա նշանակում էր Անկարան պատրաստ էր ԱՄՆ-ին տրամադրել անհրաժեշտ հետախուզական ինֆորմացիա և մասնակցել հակաթափախյալ Յուսուփային դաշինքի՝ մասնավորապես զեներալ Դոստումի (վերջինս սերտ կապեր ունի Թուրքիայի հետ, իսկ 1998 թ. Յուսուփային Աֆղանստանից վճռվելուց հետո երեք տարի վտարանդիության մեջ է ապրել Թուրքիայում) ուժերը վարժեցնելու և սպառազինելու գործում:

Վաշինգտոնում Ջեմի հանդիպումներից հետո Թուրքիան համաձայնվեց ԱՄՆ-ին տրամադրել նաև դիվանագիտական աջակցություն եվրասիական տարածաշրջանում և իսլամական երկրներում: Թուրքիան նաև որպես սիմվոլիկ ժեստ խոստացավ հատուկ նշանակության փոքրիկ ջոկատ ուղարկել Աֆղանստան: Վաշինգտոնում տեղի ունեցած այդ հանդիպումներից ամերիկացիները չափազանց բավարարված էին, իսկ Փաուելը գովաբանել էր Թուրքիային հակաահաբեկչական գործողություններին օժանդակելու հարցում ԱՄՆ յուրաքանչյուր խնդրանքը բավարարելու համար: Անկարան իր հերթին այդ բանակցությունների արդյունքները մեկնաբանել էր որպես դիվանագիտական հաղթանակ և կանաչ լույս ավելի ակտիվ քաղաքականություն վարելու համար:

Թուրքիայի քաղաքականության հիմնական նպատակները որոշվեցին հոկտեմբերի 5-ին Անկարայում տեղի ունեցած Թուրքիայի նախարարների խորհրդի նիստին: Դրանք, ըստ մեր մեկնաբանության, հետևյալն էին.

Օգտագործել հակաահաբեկչական գործողություններում Թուրքիայի մասնակցությունը ԱՄՆ-ից ու ԵՄ-ից զիջումներ ստանալու նպարակով այնպիսի հարցերի կապակցությամբ, ինչպիսիք են Թուրքիայի լիիրավ անդամակցությունը ԵՄ-ին և ընդգրկումը Եվրոպական անվտանգության և պաշտպանության քաղաքականության (ESDP) որոշում կայացնող մեխանիզմներում, Կիպրոսի հիմնախնդիրը և ֆինանսական աջակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպություններից և ԱՄՆ-ից, ինչպես նաև ռազմական օգնություն ԱՄՆ-ից:

Օգտագործել ստեղծված իրավիճակը՝ Թուրքիայի քաղաքական և ռազմական ազդեցությունը եվրասիական պետություններում, ներառյալ Աֆղանստանում, ուժեղացնելու նպատակով:

Դրանից հետո Թուրքիայի քաղաքականությունն ընդունեց ընդգծված ակտիվ տեսք: Իշխանամետ «Turkish Daily News» օրաթերթը ամենայն հստակությամբ ընդգծեց, թե «թուրք հասարակությունը պետք է համոզվի, որ մենք կարող ենք և պետք է առանցքային դեր ունենանք ահաբեկչության դեմ պայքարում»¹⁹: Դեկավար դեր ստանձնելու նպատակով Թուրքիան իրականացրեց դիվանագիտական մի շարք նախաձեռնություններ, որոնցից կարելի է նշել Թուրքիայի առաջարկը այդ երկրում անցկացնել ԵՄ և Իսլամական Կոնֆերանս Կազմակերպության անդամ երկրների ներկայացուցիչների հանդիպում: Այս նախաձեռնությունը հաստատվեց, սակայն դրա իրագործումը հետաձգվեց մինչև 2002թ. փետրվար: Իսկ Անկարայի առաջարկը կազմակերպել հակաթափախյալ ուժերի

¹⁹ Turkish Daily News, October 15, 2001

հանդիպում Ստամբուլում՝ Թուրքիայի հովվանու ներքո, չիրականացավ հակաթալիբյան կռաւիցիայի փուշտուն անդամների բացասական դիրքորոշման հետևանքով, քանի որ, ստավախություն կար, որ այդպիսով Թուրքիան նպատակ ունի ուժեղացնելու թուրքալեզու ցեղերի դերը ետթալիբյան Աֆղանիստանում:

2001 թվականի հոկտեմբերի Ձեմի այցը Ադրբեջան, Ուզբեկստան և Թուրքմենստան նպատակ ուներ ցուցադրելու Անկարայի ներգրավվածությունը եվրասիայում: Այն, հակառակ թուրքական դիվանագիտության հաշվարկների, չբերեց շոշափելի արդյունքներ: Արևմտյան լրատվական գործակալությունները մատնանշեցին այդ այցի «անորոշ օրակարգի» հանգամանքը²⁰: Իր այցի ընթացքում Ձեմը մեկ անգամ ևս, ինչպես 1990-ականների առաջին կեսին հաճախ էին անում Միջին Ասիա ժամանող թուրք բարձրաստիճան պաշտոնյաները, փորձ կատարեց «թուրքականության» զգացմունքներ արթացնել տարածաշրջանի կառավարող էլիտայի ներկայացուցիչների շրջանում: Աշխաբադում Ձեմը լրագրողների հետ զրույցի ընթացքում ասաց. «Մեծ ընտանիքի անդամները, որոնց արդեն այցելել են և կայցելեն, այժմ ավելի լավ են հասկանում միմյանցից կախված լինելու հանգամանքը. դա է իմ այս այցի իմաստը»²¹: Սակայն, ինչպես և 1990-ական թթ.-ին, այդ մոտեցումը, ըստ դիտորդների, արծագանք չգտավ և արժանացավ բավական կտրուկ հազդեցության²²:

Թուրքական դիվանագիտությունը նոր ակտիվություն ցուցաբերեց նաև Հարավային Կովկասում: Փորձելով իր օգտին ծառայեցնել նոր աշխարհաքաղաքական իրավիճակը՝ Անկարան ջանքեր գործադրեց ստանալ ԱՄՆ-ի աջակցությունը և հավանությունը տարածաշրջանում երկու նոր նախաձեռնությունների համար: Թուրքիան առաջարկեց ընդլայնել 2001 թ. սկզբին կնքված Անկարայի, Վաշինգտոնի և Թբիլիսի միջև տնտեսական համագործակցության նախնական համաձայնագիրը՝ ներառելով նաև քաղաքական և ռազմական բնագավառները: Ըստ Անկարայի այլ նախաձեռնության առաջարկվում է ռազմական համագործակցություն հաստատել Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան առանցքով՝ պաշտպանելու համար Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարը: Այդ գաղափարը առաջին անգամ քննարկվել է 2000թ. Տրապիզոնում՝ Թուրքիայի և Վրաստանի արտգործնախարարներ Ձեմի ու Մեմադարիշվիլու հանդիպման ընթացքում²³:

Այս նախաձեռնությունները հակասում են Կովկասյան կայունության պակտին, որը նախապես առաջարկվել էր նույն Ձեմի և նախկին նախագահ Սուլեյման Դեմիրելի կողմից: Նրանց առաջնային նպատակն էր մեկուսացնել Հայաստանը և թուլացնել Ռուսաստանի դիրքերը տարածաշրջանում: Հիշյալ նախաձեռնությունների միջոցով իրականում փորձ էր կատարվում խթանել հակաինտեգրացիոն միտումներ Հարավային Կովկասում, ինչը կարող է վտանգել տարածաշրջանի կայունությանը: Դրանք նաև չէին համապատասխանում այդ շրջանում ԱՄՆ-ի ստրատեգիական շահերին և չստացան ԱՄՆ-ի աջակցությունը:

Թուրքիան նաև ձգտում էր ակտիվ դեր ստանձնել Աֆղանստանի ետպատերազմյան կարգավորման գործընթացում: Թուրքական զորուժը (մոտ հազար զին-

²⁰ Steve Bryant. Turkey woos ex-Soviet states over Afghan crisis. – In: Reuters English News

²¹ Ibid.

²² Ibid.

²³ Turkish Daily News, October 18, 2001

վոր) ընդգրկվեց միջազգային խաղաղապահ ուժերի կազմում: Սպասվում է, որ համաձայն իր բազմաթիվ խնդրանքների, 2002 թ. ամառվա սկզբին Թուրքիան խնդրո առարկա ուժերում կստանձնի ղեկավար դեր: Տարածաշրջանում թուրքական ուժերի ճանաչումը որպես բազմազգ ուժերի առաջնորդող մաս կստեղծի նոր, ավելի նպաստավոր իրավիճակ՝ Թուրքիայի իղծերը Կենտրոնական Ասիայում իր գերակշռող դերը վերակենդանացնելու առումով: Միաժամանակ, հարկ է նշել, որ Թուրքիայի ետսեպտեմբերյան քաղաքականությունը Կովկասում ավելի քիչ է հաջողվել. մասնավորապես, նա դեռ չի ստացել ԱՄՆ-ի հավանությունը իր վերը նշված նախաձեռնությունները ակտիվորեն իրականացնելու համար:

3

Որոշ դիտարկումներ Թուրքիայի ետսեպտեմբերյան քաղաքականության վերաբերյալ

Որոշումներ ընդունելու մեխանիզմը.

Ժամանակակից Թուրքիայում արտաքին քաղաքականության ոլորտում որոշում կայացնելու գործընթացը որոշ առանձնահատկություններ ունի: Առաջին հերթին հարկ է նշել այդ գործընթացում զինվորականության մասնակցության հանգամանքը, հատկապես Ազգային Անվտանգության խորհրդում (ԱԱԽ) ռազմավարական կարևորության հարցեր քննարկելու ժամանակ, ուր զինվորականությունը վայելում է վերջնական խոսքի ամառարկելի իրավունք: ԱԱԽ-ի աշխատակազմը կարևոր որոշումների համար պատրաստում է նախագծեր՝ օգտագործելով ԳՍ-ից և ԱԳՆ-ից ստացված հանձարարականները:

ԱԳՆ-ի աշխատակազմը պատասխանատու է առօրյա որոշումների համար, իսկ ավելի կարևոր որոշումների համար ԱԳՆ-ի միջին օղակի ներկայացուցիչները սովորաբար խորհրդակցում են ԳՍ-ի իրենց գործընկերների հետ: Այս մեխանիզմը գործի է դրվել 1980 թ. զինվորական հեղաշրջումից հետո և անխափան գործեց անցյալ երկու տասնամյակներին: Այն խախտվել է միայն Ծոցի պատերազմի ժամանակ, երբ նախկին նախագահ Թուրգուօ Օզալը իր ձեռքը վերցրեց հսկողությունը և ստիպեց պաշտոնաթող լինել և արտգործնախարարին, և ԳՍ պետին: Ներկա ճգնաժամի ընթացքում վարչապետ Էջիթը փորձեց ձևափոխել այդ մեխանիզմը: Սեպտեմբերի 11-ից հետո կարևոր հարցերը քննարկվում էին քաղաքացիական և զինվորական բարձրաստիճան պաշտոնյաների խորհրդակցություններում, ինչպես նաև նախարարների խորհրդի նիստերին: Սակայն զինվորականության վերնախավը անվտանգության հետ կապված քաղաքականության մեջ պահպանեց իր առաջնային դերը, քանի որ սեպտեմբերի 12-ին ԱԱԽ-ի կառույցի ներքո ստեղծվեց ճգնաժամի կարգավորման կենտրոն, որի առջև նպատակ դրվեց հետևել իրադարձություններին և հանդես գալ համապատասխան առաջարկներով:

Այնուամենայնիվ, սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակմանը հաջորդած առաջին մի քանի օրերին որոշում կայացնելու գործընթացի արդյունավետությունը հարցականի տակ էր: Ըստ թուրքական մի օրաթերթի, «կառավարությունը կարողացավ ըմբռնել սեպտեմբերի 11-ի ողբերգությունը միայն մեկ շաբաթ անց»²⁴: Սակայն հետագայում թուրքական հասարակայնությունը հակված էր ավելի դրական գնահատելու այն:

Կովկասում թուրքական դիվանագիտությունը սխալներ թույլ տվեց՝ մասնավորապես վերոհիշյալ նախաձեռնությունները հրապարակ հանելով: Տեղին է նշել, որ նախկին նախագահ Սուլեյման Դեմիրելը չվարանեց հրապարակայնորեն քննադատել խնդրո առարկա նախաձեռնությունները և վերահաստատել Զարավկովկասյան կայունության պակտի վերաբերյալ իր առաջարկը, հատուկ նշելով նրա մեջ Զարավային Կովկասի բոլոր պետությունները ընդգրկելու անհրաժեշտությունը:

Թուրքիայի արտաքին քաղաքականության ստրատեգիական պլանավորումը կատարվում է ԱԳՆ-ի, նրա վերլուծական դեպարտամենտի ու ստրատեգիական վերլուծությունների ինստիտուտի կողմից, ինչպես նաև փաստորեն նրան կից գործող այնպիսի հետազոտական կենտրոնների կողմից, ինչպիսիք են ASAM-ը և TESEV-ը, որոնց ղեկավար կազմի կորիզը կազմում են նախկին բարձրաստիճան դիվանագետները²⁵: Սակայն ետսեպտեմբերյան գործընթացները դրդեցին բարձրագույն զինվորականությանը ստեղծել իր անմիջական հսկողության տակ գտնվող ստրատեգիական հետազոտությունների կենտրոն՝ SAREM-ը, որի տնօրենը գեներալ է²⁶: Բավական հատկանշական փաստ է. ըստ ամենայնի, զինվորական վերնախավը լիովին չի վստահում երկրի քաղաքական ղեկավարությանը և պատրաստվում է ընդլայնել իր դերը արտաքին քաղաքականության ստրատեգիական պլանավորման ոլորտում:

Ներքին գործոններ

Թուրքիայի հասարակական կարծիքը գերակշռող մեծամասնությամբ դեմ էր Աֆղանստանում ԱՄՆ-ի գլխավորած պատերազմին՝ մոտ 70%-ը դեմ էր ռազմական գործողություններին, իսկ 90%-ը՝ Աֆղանստան թուրքական զորքեր ուղարկելուն²⁷: Սակայն հասարակությունը հազվադեպ է ընդդիմանում կառավարության քաղաքականությանը, իսկ հակակառավարական և հակամերիկյան բողոքի ցույցերը փոքրաթիվ էին: Այս փաստը բացարվում է այսօրվա Թուրքիայում իսլամամետ քաղաքական ուժերի պառակտվածությամբ ու թուլությամբ, ինչպես նաև արմատական ազգայնական պանթուրքիստական խմբերի ու խմբավորումների ազդեցության աճով հետ: Եթե իսլամիստները որոշ զգույշ փոր-

²⁴ Türkiye, Ekim 15, 2001

²⁵ Փաստորեն, բոլոր այդ կառույցները ստեղծվել են նախորդ տասնամյակում, երբ կտրուկ փոխվեց Թուրքիա արտաքին քաղաքական միջավայրը: Նույն տարիներին հիմնադրվեցին նաև մի շարք այլ վերլուծական կենտրոններ, որոնց մի մասը ֆինանսավորվում է այլևայլ քաղաքական ուժերի ու գործարար շրջանակների կողմից և այդպիսով դուրս է մնում կառավարության անմիջական հսկողությունից:

²⁶ Milliyet, Aralık 27, 2001

²⁷ Turkish Daily News, October 4, 2001

ծեր կատարեցին քննադատելու կառավարության «հակախնամական» քայլերը, ապա շատ պանթյուրքիստական կազմակերպություններ պաշտպանեցին Եվրասիայում թուրքական ազդեցության ընդլայնման կառավարության քաղաքականությունը:

Իրաքի խնդիր

Թուրքիայի քաղաքացիական և զինվորական ղեկավարությունը հաստատուն կերպով բազմիցս հայտարարել է, որ դեմ է Իրաքի դեմ որևէ ռազմական գործողության ծավալմանը: Թուրքիան մտավախություն ունի, որ Իրաքի փլուզումը կնպաստի Յիուսիային Իրաքում քրդական պետության կազմավորմանը, որը կխթանի նաև Չարավ-արևելյան Թուրքիայի քրդերին պահանջել քաղաքական անկախություն: Բնականաբար, այդպիսի զարգացումը Թուրքիայի համար անընդունելի է:

Իրականում Անկարան չունի բավարար լծակներ Իրաքի վրա ԱՄՆ-ի հարձակումը կանխելու համար, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ Սադդամ Ֆուսեյնի դեմ ռազմական գործողությունների ծավալման դեպքում Թուրքիան կուղարկի իր զորքերը Իրաքի հյուսիսային շրջան և կփորձի իր շահերին ծառայեցնել Մոսուլի շրջակայքում ապրող թյուրքախոս փոքրամասնությանը: Թուրքիան, ըստ ամենայնի, ձգտելու է մուտք ստանալ դեպի իրաքյան նավթահանքերը և իր համար տեղ ապահովել Իրաքի ապագա քարտեզը գծողների շարքում: Իսկ դրան կարելի է հասնել միայն ռազմական գործողություններին մասնակցելով: Չավա-նաբար այդ նկատառումներից ելնելով, Թուրքիան ղեկտնքերի սկզբին Յիուսի-սային Իրաքում 500 զինվորից բաղկացած հատուկ ստորաբաժանում և ավելի քան 120 տանկ տեղակայեց՝ այսպիսով զգալիորեն ավելացնելով արդեն իսկ այնտեղ տեղակայված զորքերի և զինվորական տեխնիկայի թվաքանակը²⁸:

Թուրքիայի 2001թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների քաղաքականու-թյան վերլուծությունը հնարավորություն է տալիս համզելու հետևյալ եզրակա-ցության. մեր հարևան պետությունը ձգտում է ակտիվ դերակատարություն ստանձնելով սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողության հետևանքով աշ-խարհում և մասնավորապես Եվրասիայում ընթացող գործընթացներում, ընդ-լայնել իր ազդեցության ոլորտները: Թե որքանով դա կհաջողվի, ցույց կտա ժա-մանակը:

²⁸ Özgür Politika, Aralık 7, 2001

НАМ НУЖНА ОЧЕНЬ СИЛЬНАЯ СЛУЖБА МОНИТОРИНГА

Какова политика Турции в нашем регионе, роль и место этой страны в регионе в будущем, перспектива взаимоотношений Турции и Армении - эти и другие вопросы затронуты в интервью корреспондента НОЯН ТАПАН Сусанны ПЕТРОСЯН с заведующим отделом Турции Института востоковедения НАН Рубеном САФРАСТЯНОМ

Вопрос: *Просматриваются ли новые явления в политике Турции в нашем регионе?*

Ответ: Говоря "наш регион", я имею в виду не только Южный Кавказ, но и Центральную Азию и в определенных случаях также Ближний Восток. В последнее время некоторые турецкие аналитики пришли к выводу о том, что Турция потерпела поражение в своей политике в Центральной Азии, где, по их мнению, проиграл и Запад. Они связывают это поражение с деятельностью "Шанхайской пятёрки", а после вхождения в эту организацию Узбекистана - уже "шестёрки". Некоторые круги в Турции считают, что созданием этой организации Россия сумела указать и Западу, и Турции их место в Центральной Азии — она, фактически, закрыла Центральную Азию от дальнейшего роста турецкого влияния здесь. В случившемся Турции винит Запад, и в частности США, которые, согласно комментарию самих турок, уделяют большое внимание вопросам развития демократии в странах Центральной Азии и не занимаются организацией широкомасштабного притока инвестиций, что препятствует также росту их влияния на Южном Кавказе, и выдвигают лозунг: на Южном Кавказе не должно быть сделано ошибок, допущенных в Центральной Азии.

Вопрос: *О каких ошибках идет речь?*

Ответ: По мнению ряда турецких политиков и аналитиков, главное на Южном Кавказе — это расширение сфер влияния. Они считают, что влияние Турции и Запада должно расширяться не только за счет экономических рычагов (так, очевидно, что проект Баку-Джейхан обречен на неудачу), но и за счет создания системы безопасности. Совершенно очевидно, что налицо новая тенденция в турецком геополитическом мышлении. Турецкие аналитики считают возможным создание на Южном Кавказе новой системы безопасности, в которую должны быть включены Армения, Грузия, Азербайджан и Турция и которая, как им кажется, будет находиться под влиянием Запада и, конечно, Турции. Это и есть новое явление в политике Турции в нашем регионе.

Вопрос: *Какое практическое выражение имеет это явление?*

Ответ: С каждым годом увеличивается вовлечение турецкого капитала в Грузию, Турция начинает далеко идущее сотрудничество с Грузией в военной сфере. Рост турецкого военного присутствия в Грузии, в том числе и то, что около 12 млн долларов предусмотрено направить на модернизацию грузинских вооруженных сил, дает нам основание предполагать, что Турция пытается проводить на Южном Кавказе новую политику. Речь идет о явном ослаблении российского влияния. Турция надеется, используя этнический фактор, отрезать от России хотя бы часть Грузии. В Грузии имеется довольно большая община азербайджанцев, и не случайно, что 1 млн долларов предоставлен Турцией для модернизации аэропорта в Марнеули, района, населенного азербайджанцами. Есть еще и проблема турок-мехетинцев.

Вопрос: *Проявляются ли эти новые тенденции в отношениях с Арменией?*

Ответ: В последнее время Турция пытается изыскать новые пути во взаимоотношениях с Арменией. У нас это воспринимается как попытка Турции смягчить настроения, связанные с Геноцидом. Конечно, это правильно, но, с другой стороны, не надо забывать, что Турция имеет свои геополитические соображения в регионе, и в этом плане, как нам кажется, определенное улучшение отношений с Арменией находится в числе ее геополитических целей. Турция выравнивает для себя геополитическое пространство для дальнейших, более активных шагов. В начале 2001 года министр иностранных дел Турции Исмаил Джем внес предложение о посредничестве Турции в Карабахском конфликте. Естественно, со стороны Армении тут же последовал отказ. В Турции ожидали такого ответа, однако, как мне кажется, турки подобными предложениями преследуют далеко идущие цели: они всячески хотят показать что Турция имеет свое место на Южном Кавказе.

Следует учитывать и то, что мусульманское население Южного Кавказа, азербайджанцы, например, сближение с Турцией воспринимают как положительное явление. Грузия, для усиления своих позиций не только в экономическом, но и в военном плане, довольно активно добивается сближения с Турцией. Таким образом, в регионе вне турецкого влияния фактически остается только Армения. Посмотрев на карту, мы увидим, что Турция обходит Армению, всячески пытается изолировать и ослабить ее.

Вопрос: *Таким образом, Турция игнорирует фактор Армении?*

Ответ: Если бы это был только фактор Армении, то турки, в соответствии со своим потенциалом и менталитетом — идеей большого государства, где армянам отведена роль одного из покоренных народов, — могли бы позволить себе игнорировать армян. Но здесь есть фактор России — именно он и фактор российско-армянского стратегического сотрудничества играют определяющую роль в том, что Южный Кавказ до сих пор не оказался под значительным влиянием Турции.

Вопрос: *В таком случае, можно ли утверждать, что, несмотря на пройденный Турцией большой путь политических и экономических преобразований, националистическая, экспансионистская суть турецкого государства не изменилась?*

Ответ: Да, не изменилась. Турция по сути не изменилась, и у нее есть основания быть претенциозной: большая армия, воспоминания об Османской империи. Турция — одна из немногих стран региона, у которой накоплено огромное количество американского оружия.

Вопрос: *Есть мнение, что Турция пытается вернуть в орбиту своего влияния народы, жившие в Османской империи. Могли бы Вы согласиться с этим мнением?*

Ответ: Я не очень в это верю. Не думаю, чтобы турки серьезно планировали возвращение этих народов в орбиту своего влияния, но соответствующие заявления делаются. Например, госминистр М. Чай из партии "Националистическое движение" во время своего пребывания в Средней Азии прямо заявил, что в ГУУАМ он видит прообраз, ядро будущего сообщества наподобие Османской империи.

Вопрос: *Итак, Турция стремится к усилению своих позиций на Южном Кавказе, причем как в Азербайджане, так и в Грузии для этого имеются благоприятные условия. Какова же в данном контексте должна быть позиция Армении?*

Ответ: В первую очередь, мы должны иметь очень хорошую службу мониторинга и знать, что творится, и потом уже обдумывать свои шаги. Мне кажется, что сейчас наиболее действенный ресурс Армении для упрочения своих позиций в регионе — это статус стратегического союзника России. Это — то, что нам дано, и мы должны это использовать. С другой стороны, Армения в эти годы умудрялась проводить политику балансирования между Россией и США, и я думаю, что это наиболее верный путь для Армении. У нас есть очень неплохие позиции и лобби в США, и мы должны использовать это обстоятельство тоже.

Вопрос: *Турция надеется, что со стороны США ей будет оказана поддержка в вопросе создания новой системы безопасности в регионе. Насколько оправданны эти ожидания?*

Ответ: Действительно, турки предлагают США обеспечить Турции условия для создания системы безопасности, о которой говорилось выше. Этот подход разделяется и известным американским политологом Збигневом Бжезинским — судя по его недавним статьям. Но надо учитывать тот фактор, что Бжезинский представляет демократическую партию, а новое руководство США — республиканцы. Я думаю, что республиканское руководство США будет проводить здесь мягкую и осторожную политику и будет стараться не затрагивать болевые точки России.

**ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ՁԵՐԲԱԶԱՏՎԻ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏԱՄԲ ՌԷՆԵՑԱԾ ԿՐՏՍԵՐ ԵՂԲՈՐ ԲԱՐԴՈՒՅԹԻՅ»**

ԵՐԵՎԱՆ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Որոշ վերլուծաբանների կարծիքով, վերջերս դիտվում են որոշակի փոփոխություններ ռուս-թուրքական հարաբերություններում, ինչը նկատի առնելով՝ հնարավոր են մեծ փոփոխություններ նաև տարածաշրջանում: Ռուս-թուրքական և ռուս-հայկական հարաբերություններին, տարածաշրջանում Ռուսաստանի դիրքորոշման և այլ հարցերի շուրջ է «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ»-ի թղթակից Սուսաննա Պետրոսյանի հարցազրույցը 77 ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի թուրքիայի բաժնի վարիչ Ռուբեն Սաֆրաստյանի հետ:

«ՆՏ». - Ինչպե՞ս եք մեկնաբանում ռուս-թուրքական հարաբերություններում վերջին շրջանում տեղի ունեցած փոփոխությունները:

Ռ.Ս. - Վերջին 2 տարվա ընթացքում Ռուսաստանում մշակվեցին կարևոր փաստաթղթեր՝ արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության և ռազմական հայեցակարգերը, որտեղ ներկայացված էին Ռուսաստանի աշխարհաքաղաքական մոտեցումները: Դրանք ստեղծվել են Վլադիմիր Պուտինի անմիջական ղեկավարությամբ: Այդ փաստաթղթերում արտահայտված կարևոր մոտեցումներից մեկը բազմաբևեռ աշխարհընկալումն է, երկրորդն այն է, որ Ռուսաստանը դիտարկվում է որպես եվրասիական խոշորագույն պետություն, որը շրջապատված է լինելու բարեկամ պետությունների գոտիով: Երրորդ կարևոր կոնցեպտուալ մոտեցումն այն է, որ Ռուսաստանը պատրաստ է առաջինը կիրառել միջուկային զենք, եթե վտանգվեն իր ազգային շահերը:

Նշված մոտեցումները տեղափոխելով մեր տարածաշրջան, կտեսնենք, որ մենք գտնվում ենք դրանց իրականացման կիզակետում: Մասնավորապես, եթե դիտարկենք ռուս-թուրքական հարաբերություններում վերջին շրջանում տեղի ունեցած փոփոխությունները, ապա կտեսնենք, որ այստեղ մենք կարող ենք արձանագրել Ռուսաստանի աշխարհաքաղաքական մոտեցումները, որոնց նպատակներից մեկը իր շուրջ բարեկամ, կամ գոնե ոչ թշնամական պետությունների շարք ստեղծելն է: Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականությունն, ըստ իս, հենց այդ նպատակն է հետապնդում, իհարկե, ոչ թե բարեկամ պետություն դարձնել թուրքիան Ռուսաստանի համար, այլ հնարավորինս թուլացնել այստեղ ԱՄՆ-ի ազդեցությունը, թուրքիայի կապերն Արևմուտքի հետ և հնարավորինս սերտ կապել թուրքիան Ռուսաստանի հետ:

«ՆՏ» . - Ի՞նչ միջոցառումներ է իրականացնում Ռուսաստանը տարածաշրջանում իր աշխարհաքաղաքական ազդեցությունն ամրապնդելու համար և, ավելի կոնկրետ, ռուս-թուրքական հարաբերությունների բնագավառում:

Ռ.Ս .- Ներկա փուլում Ռուսաստանն, իհարկե, չի կարող իրականացնել լայնածավալ միջոցառումներ իր աշխարհաքաղաքական ազդեցությունն ամրապնդելու համար, սակայն ունենալով բնական հարստությունների մեծ պաշար՝ Ռուսաստանը դրանք օգտագործում է իր քաղաքականությունն իրականացնելու համար, հատկապես աշխարհաքաղաքական նպատակների համար: Եթե դիտարկենք ռուս-թուրքական հարաբերություններում «Blue stream» նախագիծը (Ռուսաստանից Թուրքիա Սև ծովի հատակով գազի մատակարարման վերաբերյալ նախագիծ - «ՆՏ»), ապա պարզվում է հետևյալը. փաստորեն Ռուսաստանը դրանով ոչ միայն նյութական շահ է ստանում, այլ Թուրքիային ավելի սերտորեն է կապում իրեն: Այսպիսով, երբ ավարտվի այդ նախագծի իրականացումը, ապա Թուրքիան գազի մոտ 80%-ը կստանա Ռուսաստանից: Ներկայումս Ռուսաստանից ստացվում է Թուրքիա մտնող գազի մոտ 60-65%-ը:

Հետաքրքիր է, որ Թուրքիան իր հերթին այս բնագավառում Ռուսաստանի քաղաքականության մեջ առաջատար դեր ունենալու ցանկություն ունի: Ուստի պատահական չէ, որ դա առաջացնում է ԱՄՆ-ի բավականին խիստ հակազդեցությունը:

«ՆՏ» . - Որո՞նք են ռուս-թուրքական հարաբերությունների սերտացման մյուս ասպարեզները:

Ռ.Ս .- Դա զենքի առաքման հետ կապված խնդիրներն են: Թուրքիան հայտարարել է, որ մոտակա տարիներին 100 մլրդ դոլարից ավելի արժողությամբ զենքերի մոդեռնիզացման ծրագիր պետք է իրականացնի: Ռուսական դիվանագիտությունը բավականին լուրջ ջանքեր է գործադրում, որպեսզի զենքերի մի մասը Թուրքիան ստանա Ռուսաստանից: Վերջերս այդ հարցի շուրջ ինտենսիվ բանակացություններ են ընթացել Ռուսաստանի և Թուրքիայի համապատասխան օդակների ներկայացուցիչների միջև: Վերջնական որոշումներ դեռ չեն ընդունվել, բայց նախանշաններ կան, որ Ռուսաստանը մույնպես կհասնի նրան, որ գոնե զենքի մի մասը Թուրքիան ստանա իրենից: Նույնիսկ խոսակցություններ կան, որ Թուրքիայում ռուսական զենք պետք է արտադրվի և առաքվի երրորդ երկրներ:

Որպես ռուս-թուրքական հարաբերությունների մոր մակարդակի արտահայտություն պետք է դիտարկել ռուսական և թուրքական ԱԳ նախարարությունների շրջանակներում խմբեր ստեղծելու վերաբերյալ որոշումը: Խմբերը պետք է ռուս-թուրքական համագործակցության վերաբերյալ մոր առաջարկներ նախապատրաստեն մինչև այս տարվա վերջը, երբ պլանավորվում է Պուտինի այցը Թուրքիա:

Մեկ հանգամանք ես՝ վարչապետ Կապանովը Թուրքիա կատարած այցի ժամանակ խոսք բացեց ռուս-թուրքական ռազմավարական համագործակցության մասին: Հետագայում այդ արատահայտությունն այլևս չօգտա-

գործվեց, և ներկայումս դիվանագիտական լեզվում բավականին ինտենսիվ օգտագործվում է «ռուս-թուրքական բնական դաշնակից» արտահայտությունը: Նույնիսկ Պուտինն է այն օգտագործել: Սա նույնպես արտահայտում է այն տեղաշարժերը, որոնք տեղի են ունենում ռուս-թուրքական հարաբերություններում, այսպիսով՝ առկա է նոր երևույթ մեր տարածաշրջանում:

«ՆՏ» . - *Ըստ Ձեզ, հնարավո՞ր է արդյոք, որ այդ նոր երևույթը հանգեցնի Ռուսաստանի և Թուրքիայի աշխարհաքաղաքական հակամարտության թուլացմանը:*

Ռ.Ս. - Չպետք է կարծել, որ ռուս-թուրքական հակամարտությունը աշխարհաքաղաքական առումով թուլանում է: Թուրքիան բավականին ակտիվ հակառուսական քաղաքականություն է իրականացնում Չարավային Կովկասում՝ Վրաստանում և Ադրբեյջանում, ներառյալ ռազմական բնագավառը, իսկ դա, իհարկե, չի կարող Ռուսաստանին դուր գալ: Բավականին ինտենսիվ կերպով Թուրքիան փորձում է հակառուսական քաղաքականություն իրականացնել Կենտրոնական Ասիայում:

«ՆՏ» . - *Ինչպե՞ս կարող է այդ հարաբերությունների նոր որակը անդրադառնալ Յայաստանի վրա:*

Ռ.Ս. - Մեզ համար շատ կարևոր է Ռուսաստանի քաղաքականության ճիշտ ընկալումը: Դա ոչ թե հակահայկական քաղաքականություն է՝ Ռուսաստանը բազմիցս ամենաբարձր մակարդակով հայտարարել է, որ Յայաստանը և Ռուսաստանը ռազմավարական դաշնակիցներ են, ինչը շատ կարևոր հանգամանք է: Ես կարծում եմ, որ մեր երկրի քաղաքական ուժերը չպետք է շահարկեն ռուս-թուրքական հարաբերություններում այս նոր երևույթները և չպետք է համարեն, որ ռուսական քաղաքականությունն ունի հակահայկական ուղղվածություն:

Ռուսաստանը մեծ պետություն է և ունի իր աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հետաքրքրությունները: Այս առումով ես կարևորում եմ հայ և ռուս ներկայացուցիչների միջև ամենօրյա շփումները բոլոր մակարդակներում և բնագավառներում: Բացի դրանից, անհրաժեշտ է խորապես ուսումնասիրել Ռուսաստանի քաղաքական վերնախավի դիրքորոշումը, իրենց գաղափարախոսությունը և, ըստ այդմ, մշակել մեր մոտեցումները: Լինել Ռուսաստանի ռազմավարական դաշնակիցը այս բարդ տարածաշրջանում հեշտ չէ, բայց միաժամանակ դա մեզ կարող է բերել որոշակի քաղաքական դիփլոմենդներ, մասնավորապես մեր դիրքը աշխարհում ավելի կբարձրանա և մեզ հետ ավելի շատ հաշվի կնստեն: Աշխարհը փոխվում է, տարածաշրջանը և Ռուսաստանը՝ նույնպես, իսկ մենք դեռևս մեզ պատկերացնում ենք կրտսեր եղբոր դերում:

Իմ կարծիքով, Յայաստանը պետք է ձերբազատվի կրտսեր եղբոր բարդույթից, որն ունի Ռուսաստանի նկատմամբ, պետք է մենք իսկապես հասնենք Ռուսաստանի ռազմավարական դաշնակցի կարգավիճակին, և վերաճենք այն դիրքին, որը մեզ վերապահվել է ռուսական քաղաքականության մեջ:

ԱՐԺԵԱՎՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐԵԱՅՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. 37 ՏԱՐՈՎ ՈՒՇԱՑԱԾ ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Լրացավ հայրենական թուրքագիտական դպրոցի լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ Ստեփան Սեմյոնի Ավանեսյանի (Ավանեսով) ծննդյան 80-ամյակը։ Դա հարմար առիթ է ոչ միայն վերհիշելու վաղամերիկ գիտնականի և հասարակական-քաղաքական գործչի անցած ուղին (Ստեփան Ավանեսյանը կյանքից հեռացել է 1964 թվականին, երբ նա ընդամենը 44 տարեկան էր), այլ նաև անդրադարձալու նրա թողած գիտական ժառանգությանը և այսօրվա աչքերով քննելու և արժեքավորելու այն։ Մանավանդ, որ նրա հիմնական աշխատությունը՝ «Ազգային փոքրամասնությունների դրությունը Թուրքիայում» խորագիրը կրող մենագրությունը (Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1963, ռուսերեն) լույս է տեսել սահմանափակ տպաքանակով և նախատեսված է եղել «ծառայողական օգտագործման» համար։ Այդ պատճառով նրան ծանոթանալու հնարավորություն է ստացել միայն մասնագետների մի չափազանց նեղ շրջանակ, իսկ գիտական լայն հասարակայնությանը նա, փաստորեն, մնացել անհայտ։ Համաձայն նախկին Խորհրդային Միությունում ընդունված կարգի արգելվել է նաև գրախոսել այն գիտական մամուլում։ Այնպես որ սույն գրախոսականը ուղացել է 37 տարով։

Նախքան բուն նյութին անցնելը համառոտակի ներկայացնենք Ստեփան Ավանեսյանի կենսագրական ուղու հիմնական ուղեմիջները։ Նա ծնվել է 1920 թվականին պատմական Գողթն գավառի նշանավոր Փառակա ավանում (այժմ՝ Նախիջևանում)։ Եղել է Երևանի պետհամալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի առաջին շրջանավարտներից։ Ուսանել է և հաջողությամբ ավարտել է նաև ԽՍՀՄ ամենահեղինակավոր ուսումնա-գիտական հաստատություններից մեկը՝ Կոմկուսի կենտկոմին կից Հասարակական Գիտությունների Ակադեմիան։ Այստեղ էլ 1955 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ «Թուրքիան Հյուսիս-Ատլանտյան Միության համակարգում (1951 – 1954 թթ.)» խորագրով։ 1957 թվականից մինչև կյանքի վերջը աշխատել է Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի համակարգում. իսկզբից Պատմության ինստիտուտում, իսկ հետագայում՝ նորաստեղծ Արևելագիտության սեկտորում (ներկայումս՝ ինստիտուտ) որպես ավագ գիտաշխատող, դառնալով նրա հիմնադիրներից մեկը։ 1958 թվականից միաժամանակ եղել է նաև Ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի օգնականը և համակարգել է արտասահմանյան կապերը։ Նախքան գիտությանը նվիրվելը Ավանեսյանը պատասխանատու պաշտոններ է վարել Հայաստանի Կոմկուսի կենտրոնական կոմիտեի համակարգում, զբաղվել է լրագրությամբ՝ եղել «Կոմունիստ» օրաթերթի բաժնի վարիչ. ժամանակակիցները նրան հիշում են նաև որպես Հայաստանի երիտասարդ հեռուստատեսության առաջին քաղաքական մեկնա-

բան: Ավելացնենք, որ օժտված է եղել նաև գրական ծիրքով. նրա գրչին պատկանող պատմվածքները լույս են տեսել «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրի էջերում:

Ստեփան Ավանեսովի գիտական հետաքրքրությունների շրջանակում գտնվել են հանրապետական թուրքիայի և արտաքին, և ներքին քաղաքականության հարցերը: Գիտնականի աշխատությունները նվիրված են, մասնավորապես, 1950-ական թվականներին Մերձավոր ու Միջին Արևելքում թուրքիայի ամերիկանամետ քաղաքականության դրսևորումների, ինչպես նաև թուրքիայում ազգային հարցի ռանձմահատկությունների ուսումնասիրմանը:

Նրանք թվում առանձնահատուկ տեղ է գրավում վերոհիշյալ մենագրությունը: Արդեն իսկ նրա թեման բացառիկ երևույթ էր ոչ միայն հայկական, այլ նաև խորհրդային արևելագիտության համար. մասնատիպ աշխատություն, եթե չհաշվենք ժամանակագրական և թեմատիկ առումով ավելի նեղ ընդգրկում ունեցող մոսկովաբնակ հայագի թուրքագետ-քրդագետ Մանվել Հասրատյանի աշխատությունը, այն ժամանակ ուղղակի չկար: Փաստորեն Ավանեսյանը իր գրքով հիմք դրեց ԽՍՀՄ-ում հանրապետական թուրքիայի ազգային քաղաքականության ուսումնասիրմանը: Նշենք, ի դեպ, որ մինչ օրս թուրքագիտության այդ ոլորտում, որի գիտական ու քաղաքական նշանակությունը Հայաստանի համար դժվար է գերազնահատել, նկատվում է մասնագետների և լուրջ հետազոտությունների զգալի պակաս:

Համոզեցուցիչ և տրամաբանական է գրքի կառուցվածքը: Հեղինակը սկզբից վեր է հանում թուրք կառավարողների ազգային քաղաքականության գաղափարական հիմքերը: Նա համառոտակի բնութագրում է դեռևս օսմանյան շրջանում առաջացած այնպիսի գաղափարական-քաղաքական վարդապետությունները, ինչպիսիք են օսմանիզմը, պանթուրքիզմը ու պանիսլամիզմը, վեր է հանում նրանց ծայրահեղ հետադիմական ու դաժան բնույթը, ցույց է տալիս քեմալիզմի՝ հանրապետական թուրքիայի պաշտոնական գաղափարախոսության օրգանական կապը նրանց հետ: Նշենք, որ իր ժամանակի համար նման մոտեցումը քեմալիզմի նկատմամբ հազվագյուտ երևույթ էր խորհրդային արևելագիտության մեջ: Միայն դրանից հետո հեղինակը անցնում է թուրքիայում բնակվող այլազգիների իրավական ու քաղաքական դրության և երկրի կառավարող շրջանակների կողմից նրանց նկատմամբ իրականացվող քաղաքականության առանձնահատկությունների հետազոտմանը: Առանձին գլուխներով ներկայացված են թուրքիայում բնակվող քրդերի և հայերի վիճակի հետ կապված բազմաթիվ և տարաբնույթ հնդիրները, ինչպես նաև իշխանությունների դաժան քաղաքականությունը նրանց նկատմամբ: Հատուկ գլուխ է նվիրված 1955 թվականի սեպտեմբերի 6-7-ին Ստամբուլում տեղի ունեցած հայ և հույն խաղաղ ազգաբնակչության կոտորածների լուսաբանմանը: Մենագրությանը հավելված է հեղինակի կազմած ժամանակակից թուրքիայի էթնոգրաֆիական քարտեզը: Թուրքիայի հայ աղգաբնակչությանը նվիրված գլխում բերված են բազմաթիվ աղյուսակներ, որոնք ցույց են տալիս երկրի առանձին վիլայեթների և մույնիսկ բնակավայրերի հայ ազգաբնակչության թվաքանակը: Ավելորդ չենք համարում մեկ անգամ ևս ընդգծել, որ վերըթվարկված թեմաները ու հարցադրումները նորույթ

էին ժամանակի թուրքագիտական գրականության մեջ և ունեին (անտարակույս, հիմա էլ պահպանում են) բացառիկ գիտական ու քաղաքական նշանակություն:

Մենագրության աղբյուրագիտական հենքը ակնառու վկայում է հեղինակի կատարած մեծածավալ աշխատանքի մասին: Նա լայնորեն օգտագործել է ոչ միայն թուրքական (շուրջ 10 անվանում), հայկական (23 անվանում), բուլղարական և անգլիալեզու մամուլը, այլ նաև մեծ տեղ է հատկացրել թուրքական օրենսդրական ակտերի ժողովածուներից՝ «Դյուսթյուր»ներից, ինչպես նաև երկրի խորհրդարանի որոշ նիստերի սղագրություններից քաղած նյութերին: Թուրքական սկզբնաղբյուրների օգտագործումը շահեկանորեն տարբերում է Ս. Ավանեսյանի մենագրությունը նորագույն պատմությամբ զբաղվող շատ գիտնականների աշխատություններից, որոնց աղբյուրագիտական հենքը հիմնականում սահմանափակվում է մամուլով: Գրքում օգտագործված են նաև մի շարք հազվադեպ անգլալեզու հրատարակություններ, ի մասնավորի, օրինակ, Լոնդոնում հրատարակվող կրոնական «The Ecumenical Review: World Council of Churches» պարբերականը, որի 1956 թվականի համարներից մեկում տպագրվել էր Եկեղեցիների Համաշխարային Խորհրդի կողմից ստեղծված հատուկ հանձնաժողովի հաշվետվությունը 1955 թվականի սեպտեմբերյան կոտորածների հետևանքների՝ տեղում ուսումնասիրման արդյունքների մասին: Նման արժեքավոր սկզբնաղբյուրների օգտագործումը, ինչ խոսք, էլ ավելի է բարձրացնում գրախոսվող մենագրության նշանակությունը:

Գրքում բերված հարուստ փաստացի նյութը և նրա բարեխիղճ վերլուծությունը հնարավորություն են տվել հեղինակին առանձնացնելու մի շարք սկզբունքային նշանակություն ունեցող երևույթներ, որոնք ակներևորեն վկայում են, որ հանրապետական Թուրքիայի քաղաքականությունը ազգային հարցում ունի ծայրահեղ շովինիստական բնույթ և հաճախակի օգտագործում է ֆիզիկական բնաջնջումը որպես այդ քաղաքականության իրականացման կարևոր միջոցներից մեկը: Նրանց թվին Ս. Ավանեսյանը դասում է այդպիսի խայտառակ իրողություններ, ինչպիսիք են այլազգիների մշակութային-լուսավորչական հաստատությունների, նրանց մշակույթի և ազգային ինքնագիտակցության հետևողական թուրքացման քաղաքականությունը, «վարլիք վերգիսի» հարկային օրենքը, որով Երկրորդ համաշխարային պատերազմի տարիներին փաստորեն բռնագրավվեց այլազգիների ունեցվացքի զգալի մասը, 1955 թվականի սեպտեմբերի հունական ու հայկական կոտորածները և, իհարկե, արեն 1920-ական թվականներին սկիզբ առաջ քրդերի ֆիզիկական բնաջնջման հետևողական քաղաքականությունը: Այդ երևույթները բացահայտորեն հակասում են Լոզանի պայմանագրի 38-44 հոդվածներին, «դրանից բխող բոլոր բարոյական ու իրավաբանական բնույթի հետևանքներով», - գրում է հեղինակը: Այս եզրահանգումը արվել է շուրջ չորս տասնամյակ առաջ, սակայն այն նույնքան այժմեական է նաև մեր օրերում, երբ «քաղաքակիրթ» Թուրքիան թափում է Եվրամիության դռները:

Եզրակացնենք. Խտեփան Ավանեսյանի մենագրությունը կարևոր ներդրում է հարևան պետության ազգային քաղաքականության ուսումնասիրման բնագավառում, այն բռնել է ժամանակի բնությունը և պիտի մտցվի գիտական լայն շրջանառության մեջ: Անհրաժեշտ է թարգմանել այն հայերեն և վերահրատարակել մասսայական տպաքանակով:

ARMENIA, TURKEY RELATIONS SEEM TO GET OFF THE GROUND

YEREVAN, ARMENPRESS:

Samvel Mkrtchian, a senior official of the Armenian foreign ministry and Ruben Safrastian, the director of the Turkish Department of the Armenian Institute for Oriental Studies, were invited, along with government officials and scientists from a dozen of other countries, to take part in an international conference on Search of Stability in the Caucasus in Istanbul February 17.

Speaking to Armenpress, Safrastian said that their participation in the conference was important in terms of sharing Armenia's official position and exchange of opinions.

"Extending an invitation to Armenia was not coincidental, as no peace and stability can be established in the region without taking Armenia's factor into account," said Safrastian.

"On the other hand, sending the invitation to Armenia was a kind of good will manifestation on behalf of Turkey, as it wants diplomatic contacts with Armenia. Turkey's foreign minister Ismail Cem's announcement that Turkey is ready to mediate Armenia-Azerbaijan peace treaty over Karabagh can be regarded as such a manifestation. But Armenia's refusal to accept it was natural, as there are no diplomatic relations between the two countries, the borders are closed and because of Turkey's one-sided position favoring Azerbaijan," Safrastian said.

Safrastian said many Turks regarded Cem's proposal as a "dead born child". A daily Milliyet correspondent rushed at Cem demanding how Turkey was going to mediate Armenian-Azerbaijani peace treaty if it does not have diplomatic relations with Armenia.

"It is clear that the announcement was made with the purpose of reaching some geo-political goals, to enlarge Turkey's role in the region as a counter measure against Russian influence," Safrastian said.

Safrastian said Armenian-Turkish relations had not been discussed during the conference, "but of course there were talks behind the scene that a dialogue is needed. Thus, opinions were voiced that Turkey had lost opportunities to establish relations during the previous regime of ex-president Ter-Petrosian, so another attempt should be made. Safrastian said that Turkey understands well that without normalizing its relations with Armenia it would not be able to fully represent its strategic position in the region.

There were also calls for refraining from establishment of any kind of relations with Armenia unless it refuses from its claims. No word was said about the Armenian genocide and its adoption by France's parliament. The participants

tried, in general, to take the questions away from political filed. But one Turkish historian, participating in the meeting, proposed to embark on a dialogue between those historians of the two countries who do not distort the obvious historical facts.

Both Turkish and other senior officials noted in their speeches that one should not wait until the conflicts in the South Caucasus are solved and only then to launch economic cooperation. "All the sides should do everything in their power to start cooperation in their respective areas and thus create favorable conditions for regulation of the conflicts," this was the main refrain in the speeches, except the Azerbaijani representative who appeared in a kind of isolation by insisting that first conflicts must be solved. Armenia's position to start dialogue without any pre-conditions was welcomed by practically all the participants.

"I think there is some positive shift in Turkish diplomacy and it is most probable that some process aiming to re-evaluate the former positions are going on there," Safrastian said. This conference is the beginning of a long road, which may have its continuation in Yerevan Paris or in Moscow, Safrastian concluded.

ՍԱՖՐԱՍՏԵԱՆԻ ԱՍՈՒԼԻՍԸ

Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Թուրքիայի բաժնի վարիչ, Պատմաբանական Փրոֆ. Տոքթոր Ռուբեն Սաֆրաստեան Երկուշաբթի առաւօտ այցելեց Ալոս-ի խմբագրատունը և պատասխանեց մեր հարցումներուն: Ստորև Տոքթ. Սաֆրաստեանի խօսքերէն հետաքրքրական մասեր.

Այս վերջին անիսներու իրադարձությունները, տարբեր երկիրներու կողմէ ցեղանսպանութեան քննարկումը, ընդունիլը պատճառ են դարձեր, որ Թուրքական մէտիայի մէջ հարցը ստանայ այժմեական բնոյթ: Կ'երեւի թէ այդ պատճառաւ ժողովրդի ընթացքին հարցերու տարալի մը տեղաց իմ վրայ: Եւ հարցերը շատ տարբեր տեսակի էին: Ամենակարեւորը, Թուրք հասարակութիւնը մամուլի միջոցաւ կ'ուզէր գիտենալ իմ կարծիքը, թէ՛ ցեղանսպանութիւն եղած է, թէ՛ իմ եւ թէ՛ մի շարք այլ պատմաբաններու այդ մասին կարծիքները:

Իսմայիլ ճեմ-էն միջնորդութեան առաջարկ

Գալով Արտաքին Գործոց Նախարար Իսմայիլ ճեմի Ատրպէյճանի եւ Ղարաբաղի հակամարտութեան միջնորդ հանդիսանալու առաջարկին, ես իմ կարծիքս յայտնեցի, որ միջնորդ հանդիսանալու այդ առաջարկը կը համարեմ կարելի: Բայց այստեղ կայ մի այլ հանգամանք. Թուրք կառավարութիւնը կը բռնէ Ատրպէյճանի կողմը, հիմնուելով թնիք քաղաքականութեան վրայ, շրջափակելով Հայաստանը եւ յարաբերութիւնները չհաստատելով, սահմանները փակ պահելով Ատրպէյճանին կ'օգնէ: Նաեւ միջազգային հանդիպումներու ընթացքին Թուրքիա չէզօք դիրք չէ բռնած եւ միշտ աշխատած է օգնել Ատրպէյճանին:

Եթէ Թուրքիա կարողանայ յաղթահարել իր թուլութիւնը քաղաքականութեան մէջ, նորմալ յարաբերութիւններ հաստատել Հայաստանի հետ, սահմանները բանայ եւ Ղարաբաղի հակամարտութիւնով չշարունակէ աջակցիլ Ատրպէյճանի, ապա ինչո՞ւ չէ, շատ հնարաւոր է որ Թուրքիան միջնորդական դեր կատարէ:

Շատ կարելի էին Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարի հորիորդակահին խօսքերը. «Պէտք չէ սպասել որ Կովկասի հակամարտութիւնը լուծի եւ յետոյ համագործակցինք»: Շատ բարձր կզնահատեմ Թուրքիայի այս մօտեցումը, այն առումով, որ եթէ մենք սպասենք մինչեւ հակամարտութեան լուծումը, կրնայ շատ ժամանակ անցնիլ: Կրնանք կամայ կամաց սկսիլ տարբեր մակարդակներու համագործակցութեան Հարաւային Կովկասի երկիրներու միջեւ: Այս թեզը պաշտպանուեցաւ մասնակիցներու մեծ մասին կողմէ, բացի Ատրպէյճանէն: Շատ յատկանշական է, որ Ատրպէյճանը առանձին մնաց իր թեզին մէջ:

Պաքու-ճէյհան

Իմ կարծիքով, Պաքու-ճէյհան նախագիծը չ'իրականանար: Ոչ թէ կ'արգիլուի, այլ եթէ դուք նայիք քաիտեզին, կը տեսնէք որ Պաքուի քարիւղը համաշ-

խարհային շուկաներ հասցնելու ամենակարճ ճանապարհը Իրանի վրայէն կ'անցնի: Պաքուէն- ճեյհան, ճանապարհը փաստօրէն երկու անգամ կ'երկարի: Միւս կողմէ, վերջ ի վերջոյ Արեւմուտքը Պաքուի քարիւղին պէտք չունի: Եթէ դուրս գայ, այդ քարիւղը կ'օգտագործուի Արեւելեան արագ զարգացող պետութիւններու՝ Զնդկաստանի, Չինաստանի եւ այլ երկրներու կողմէ:

Եւ «Հայկական Հարց»ը

Հայկական հարցը գոյութիւի ունի արդէն տասնեակ տարիներէ ի վեր, որպէս միջազգային դիվանագիտութեան հարց: Ներկայիս համդէս կու գայ Հայոց Ցեղասպանութեան դատապարտման խնդիրը եւ կ'օգտագործուի ուրիշ պետութիւններու կողմէ իր շահերուն համար: Ատկէ կարելի է խուսափիլ միայն, հարցը վերացնելով, այսինքն դատապարտման խնդիրը լուծելով, առաջին հերթին ճանչնալով «ցեղասպանութիւն»ը: Իսկ ցեղասպանութիւնը պետական ոճրագործութիւն է եւ պատիժը պէտք է այդ պետութիւնը կրէ:

Պաշտօնական պատմութիւնը տասնիակ տարիներ շարունակ ուրացեր է այդ փաստը եւ թուրքոյ նոր սերունդները ընդհանրապէս պատկերացում չունին անոր մասին: Թուրք ժողովուրդը, Թուրք մտաւորականը եւ ամենակարեւորը՝ Թուրք Պետութիւնները ուժ կ'գտնեն՝ զիրենք զատելու այդ շրջանէն: Ոճրագործութիւնը կատարած է Երիտթուրքական կուսակցութեան շրջանին, որ իր էութեամբ ընդլատարկեայ թօթալիթը կուսակցութիւն մըն էր, որ դառնալով կառավարող կուսակցութիւն՝ պահպանեց իր ընդլատարկեայ գործունէութեան շատ ծելըրը, օրինակ՝ ոճրագործութիւնը պատրաստուել է գաղտնիութեան մէջ: Օգտագործուել են որոշ կազմակերպութիւններ, օրինակ՝ «Թէշքիլաթը Մահսուսա»ն, որուն մէջ ընդգրկուել են բանտերէն արձակուած ոճրագործներ:

Ոճրագործութիւնը նախապատրաստուած էր կուսակցութեան մը կողմէ, որ արդէն նորմալ բաղադրական կուսակցութիւն ալ չդարձաւ:

Ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, թէ հրամաններու զգալի մեծամասնութիւնը տրուած են ոչ թէ պետական խողովակներով, այլ կուսակցական եւ կան վկայութիւններ, որ մեծ թիւով փաստաթուղթեր Երիտ-Թուրքական կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի անդամ Տոքթ. Նազլմի կողմէ, սընտուկի մը մէջ դրուելով տարած է եւրոպա:

Հայաստանի և Ռուսական արխիւները

Իսկ Հայաստանի արխիւները փաստօրէն ստեղծուած են ցեղասպանութենէն յետոյ եւ կան ցեղասպանութիւնը հաստատող հազարաւոր փաստաթուղթեր: Մեր արխիւներուն լաւագոյն մասը ցեղասպանութեան վերապրողներուն յուշերն են: Գալով Ռուսական արխիւներուն, կարելի են եւ ուսումնասիրուած՝ որոշ չափով եւ այս փաստաթուղթերուն զգալի մասը հրատարակուած է Հայաստանի մէջ՝ Մկրտիչ Ներսէսեանի կողմէ, «Հայերի Ցեղասպանութիւնը մէջ» հաւաքածոյին մէջ:

Իմ կարծիքով, Հայ եւ Թուրք պատմաբաններու միջեւ այս երկխօսութիւնը պէրք չէ ընթանայ «ցեղասպանութիւնը եղաւ թէ չեղաւ» նիւթի շուրջ, այլ ուղղակի եղածի հետաւեցներու կամ ընթացքի մասին: Երկրորդ հանգամանքն է որ ըլլայ պատմաբաններու եւ մասնագետներու միջեւ, որոնք կարող են քննարկման ընդհանուր դաշտ մը ստեղծել: Եթէ ըլլան այդպիսի համդիպումներ, հնարաւոր կ'ըլլայ համաձայնութեան յանգիլ: Հակառակ պարագային, գիտական քննարկում հնարաւոր չէ: Մարդիկ պէտք է իրար հասկանան, իրարու հետ խօսին:

ՈՒՇԱԳՐԱՎ ԱՇԽԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄ

*Nikolay Hovhannisyan. Formation of the Transcaucasian-Middle Eastern Geopolitical Region.
Yerevan: Publishing House of NAS Armenia, 2000.*

Անցյալ դարի 90-ական թվականները ոչ միայն վերածնեցին եվրասիական մայրցամաքի քաղաքական քարտեզը, այլ նաև սկիզբ դրեցին մի շարք խորքային լայնածավալ տեղաշարժերի, որոնք կարելի է բնութագրել որպես նոր աշխարաքաղաքական համակարգերի առաջացում: Ներկա փուլում նրանց ուղղվածությունը, ինչպես նաև տարբերակիչ բաղադրամասերից շատերը արագընթաց քաղաքական փոփոխությունների հորձանութում դեռևս դժվար նշմարելի են նույնիսկ մասնագետների համար: Վերջերս ուշագրավ գիտական կոնցեպտով հանդես եկավ Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի տնօրեն և հակամարտությունների կարգավորման Կենտրոնի ղեկավար Նիկոլայ Յովհաննեսյանը: Ճանաչված գիտնականի կարծիքով ներկայումս Անդրկովկասը ընդգրկված է այդպիսի մի աշխարաքաղաքական գործընթացի մեջ, որի էությունն է «անդրկովկասյան - մերձավորարևելյան աշխարաքաղաքական տարածաշրջանի կազմավորումը»: Այդ վարկածի համակողմանի հիմնավորումը նա ներկայացրեց օգոստոս-սեպտեմբերին Մոսկվայում (Կամադա) գումարված ասիական և հյուսիսաֆրիկյան հետազոտություններին նվիրված 36-րդ միջազգային կոնգրեսում, որտեղ նա Հայաստանի միակ ներկայացուցիչն էր: Հեղինակավոր գիտաժողովի մասնակիցների կողմից պրոֆեսոր Յովհաննեսյանի զեկուցումը լսվել է մեծ հետաքրքրությամբ: Գիտական հասարակայնության ավելի լայն շրջանակները՝ ինչպես մեզանում, այնպես էլ արտերկրում հնարավորություն են ստացել ծանոթանալ այդ վարկածին առանձին գրքույկով անգլերեն լեզվով հրատարակված զեկուցման տեքստից: Ընդգծենք նաև այն հանգամանքը, որ գրքույկը տպագրվել է ՀԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Գիտական խորհրդի որոշմամբ. այսպիսով ինստիտուտը հավատարիմ է մնում վերջին տարիներին որդեգրած հրատարակչական քաղաքականությանը՝ հնարավորին չափ մեծ տեղ հատկացնել անգլերեն լեզվով հրապարակումներին, ինչը զգալի ընդլայնում է հայրենական արևելագիտական դպրոցի ներկայացուցիչների հնարավորությունները ամմասն չճանալու գիտության այդ բնագավառում այսօր աշխարհում ընթացող բանավեճերին ու քննարկումներին: Առաջինը, որ աչքի է զարնում Ն. Յովհաննեսյանի կողմից առաջարկված գիտական կոնցեպտի հետ ծանոթանալիս, դա նրա լավ հիմնավորվածությունն է՝ պատմական տեսանկյունից: Քննության առնելով պատմական անցյալը, հեղինակը նշում է, որ Անդրկովկասի երեք հիմնական պետությունները՝ Հայաստանը, Վրաստանը և Ադվանքը իրենց գոյության ողջ ընթացքում ակտիվ ներգրավված են եղել Մերձավոր Արևելքի քաղաքական

կյանքի մեջ: Նա բերում է, մասնավորապես, Արտաշեսյան Հայաստանի օրինակը, որը, ըստ նրա բնութագրման, «ականավոր դերակատարություն ուներ Անդրկովկասի քաղաքական կյանքում ու Մերձավոր Արևելքի միջազգային հարաբերություններում»: Համաձայն հեղինակի, անդրկովկասյան ժողովուրդների հիշողության մեջ այդ համագամանքը թողել էր «խորը հետք», ինչը և նպաստեց, որ երբ 90-ական թվականների սկզբին Անդրկովկասը վերականգնվեց որպես ինքնուրույն միավոր, այդքան հեշտ և նույնիսկ «բնական» եղավ «կամուրջ կառուցել» Մերձավոր Արևելքի հետ: Հեղինակի ձգտումը իր աշխարաքաղաքական հայացքները հիմնավորելիս հաշվի առնել նաև պատմական փորձը անտարակույս շահեկանորեն տարբերում է նրան ժամանակակից շատ քաղաքագետներից, որոնք հաճախակի թերագնահատում են և նույնիսկ անտեսում են պատմական գործոնների ազդեցությունը ներկայումս ընթացող աշխարաքաղաքական գործընթացների վրա: Պրոֆեսոր Հովհաննիսյանի կողմից առաջարկվող կոնցեպտի կարևոր առանձնահատկություններից է նրա քաղաքական հավասարակշռվածությունը և քաղաքագիտական հիմնավորվածությունը: Հեղինակի եզրակացությունները արդյունք են ճշգրիտ և նուրբ վերլուծությունների, որոնք բխում են տարածաշրջանի առանձնահատկությունների խորը իմացությունից: Դա ամենևին էլ պատահական չէ. Նիկոլայ Հովհաննիսյանը մերձավորարևելյան հիմնախնդիրների լավագույն և հեղինակավոր գիտակներից է ոչ միայն մեզանում, այլ նաև արտերկրում, նրա աշխատությունները տպագրվել են բազմաթիվ լեզուներով, իսկ նրանց հեղինակը ընտրվել է մի շարք արտասահմանյան գիտությունների ակադեմիաների անդամ, այդ թվում, նաև Նյու Յորքի Գիտությունների Ազգային Ակադեմիայի: Այսպես, անդրադառնալով «Մերձավոր Արևելք-Անդրկովկաս» տարածաշրջանի ներկայիս ռազմավարական իրադրությանը, հեղինակը ընդգծում է մի քանի նոր երևույթներ, որոնք ունեն որոշիչ նշանակություն այստեղ ընթացող քաղաքական գործընթացները աղեկատու ընկալելու համար: Ըստ Հովհաննիսյանի, դրանք հետևյալն են. Մերձավոր Արևելքի թատերաբեմից անհայտացել է գերտերություններից մեկը՝ խորհրդային Միությունը, որը տասնամյակներ շարունակ ուներ չափազանց ակտիվ, ժամանակ առ ժամանակ նույնիսկ որոշիչ դերակատարում այս տարածաշրջանում, իսկ մյուս գերտերության՝ ԱՄՆ-ի նշանակությունն ու դերը անմախառն աճել են: Միաժամանակ, ի հայտ են եկել անկախ անդրկովկասյան պետություններ, որոնք լի-նելով թույլ, վտանգ չեն ներկայացնում մերձավորարևելյան երկրների համար, ի տարբերություն նախկին խորհրդային Միության: Այդ հանգեցրել է ուժերի հավասարակշռության փոփոխմանը ի նպաստ տարածաշրջանի խոշոր պետությունների՝ Թուրքիայի և Իրանի: Որպես հետևանք, տարածաշրջանում սրվել է քաղաքական իրադրությունը, քանի որ արդեն գոյություն ունեցող արաբ-իսրայելական հակամարտությանը («աշխարհի ամենահին հակամարտություններից մեկին», հեղինակի բնութագրմամբ) ավելացել են նորերը՝ անդրկովկասյանները: Գիտնականի վարկածի կարևոր բաղկացուցիչ մասն է կազմում մերձավորարևելյան տարածաշրջանի անդրկովկասյան ենթատարածաշրջանի քաղաքական կառուցվածքի բնութագրումը: Հեղինակը նշում է, որ խորհրդային Միության փլուզումից և երեք ինքնիշխան պետությունների՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեյջան առաջացումից հետո իրենց ողջ սրությամբ ի հայտ եկան մի շարք

հին ազգային-քաղաքական-հակամարտություններ, որոնք սովետական շրջանում գտնվում էին թաքնված վիճակում: Այդ հակամարտություններից երկուսի՝ Ղարաբաղյանի և Աբխազականի զինված բախումների փուլի հետևանքով առաջացած Լեռնային Ղարաբաղի և Աբխազիայի հանրապետությունները, չնայած այն հանգամանքի, որ դեռևս ձևականորեն չեն ճանաչված համաշխարհային հանրության կողմից, սակայն ունեն ինքնիշխան պետությանը հատուկ բոլոր ատրիբուտները և իրականում հանդիսանում են անկախ պետություններ: Նրանք արդեն այսօր, ինչպես նշում է հեղինակը, «որոշ դեր են խաղում Անդրկովկասի քաղաքական կյանքում» և կարող են դասվել «հիմնական դերակատարների» թվին: Այսպիսով, եզրակացնում է Ն. Յովհաննեսյանը, անդրկովկասյն ենթատարածաշրջանը ներկայումս բաղկացած է երեք դե -յուրե անկախ պետություններից և երկու դե -ֆակտո: Սույն եզրահանգումը ունի սկզբունքային նշանակություն և չափազանց կարևոր է ինչպես գիտական, այպես էլ քաղաքական առումով և կարող է ունենալ հեռուն գնացող հետևանքներ: Հետաքրքիր են հեղինակի դիտարկումները, կապված «Մերձավոր Արևելք-Անդրկովկաս» տարածաշրջանի «հիմնական դերակատարների» միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների և նրանց կողմից հետապնդված աշխարաքաղաքական նպատակների հետ: Նա բաժանում է այդ դերակատարներին երեք խմբի: Առաջին խումբը կազմում են Անդրկովկասի երեք պետություններ՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղը ու Աբխազիան: Պետությունների երկրորդ խումբը կաղմված է Միջին Արևելքի երկրներից (Թուրքիա, Իրան, որոշ արաբական երկրներ և Իսրայել): Երրորդ խմբին է դասում Ն. Յովհաննեսյանը ԱՄՆ-ին, Ռուսաստանին և Եվրոպական Միության մի շարք հիմնական անդամ-պետություններին, որոնք չլինելով աշխարագրական առումով տարածաշրջանային երկրներ, այնուամենայնիվ կարևոր դեր են կատարում այստեղ ընթացող գործընթացներում: Սույն դասակարգումը համահունչ է անցյալ տարի Հայաստանի կողմից առաջ քաշած 3 (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) + 2 (Թուրքիա, Իրան) + 3 (Ռուսաստան, ԱՄՆ, Եվրամիություն) բանաձևի հիման վրա Անդրկովկասում կայունության և անվտանգության համաձայնագիր ստորագրելու վերաբերյալ առաջարկին և փաստորեն տեղադրում է այն ավելի լայն աշխարաքաղաքական համտեքստի մեջ: Հեղինակը անդրադարձել է նաև տարածաշրջանային դերակատարների միջև գոյություն ունեցող երկկողմանի հարաբերությունների ներկայիս վիճակին, քննության է առել նրանց ռազմավարական շահերը և երկարաժամկետ քաղաքական նպատակները, և այլն: Մասնավորապես, համեմատաբար մեծ տեղ է հատկացված հայ-թուրքական հարաբերությունների բնութագրմանը, ինչպես նաև Թուրքիայի քաղաքականությանը որոշ առանձնահատկությունների վերհանմանը: Նշվում է, որ հայ-թուրքական հարաբերությունների նորոշակացմանը խոչընդոտում է Թուրքիան, պայմանավորելով Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը վերջինիս կողմից գիշումներով մի քանի սկզբունքային հարցերում: Անդրադառնալով Թուրքիայի քաղաքականության հեռահար նպատակներին, Ն. Յովհաննեսյանը նշում է, որ վերջինս ձգտում է օգտագործել Անդրկովկասը որպես «բնական կամուրջ»՝ հասնելու համար Կենտրոնական Ասիա և այդպիսով իրականացնել իր պանթյուրքիստական երազանքները: Սակայն Ն. Յովհաննեսյանը

չի սահմանափակվում միայն երկկողմանի հարաբերությունների ոլորտով, այլ փորձում է բացահայտել որոշ դեպքերում նրանց հիմքում գտնվող ապագա քաղաքական առանցքների սերմերը: Այսպես, օրինակ, պրոֆեսոր Յովհաննիսյանի վերլուծությունները ցույց են տալիս, որ Վրաստանը, Ադրբեջանը և Թուրքիան ցուցաբերում են ձգտում ավելի սերտացնել իրենց հարաբերությունները. նույնը կարելի է ասել Հայաստանի և Իրանի մասին: Իրավացիորեն ընգծելով Ռուսաստանի կարևոր դերը տարածաշրջանում, նա ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ անդրկովկասյան պետություններից միայն Հայաստանն է, որի հետ Ռուսաստանը պահպանում է «սերտ բարեկամական» հարաբերություններ և որի տարածքում տեղակայված ռուսական զինված ուժերի ստորաբաժանումը ոչ միայն նպաստում է երկու երկրների անվտանգության պահպանմանը, այլ նաև պաշտպանում է ԱՊՀ-ի հարավային սահմանները: Ադրբեջանի ու Վրաստանի դիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ բնութագրվում է որպես «ավելի շուտ հակառուսական», քան թե ռուսաետ: Հետաքրքիր են նաև հեղինակի դիտարկումները վերջին տարիներին Անդրկովկասում Իսրայելի քաղաքականության ակտիվացման շարժառիթների և առանձնահատկությունների վերաբերյալ: Ուղղակիորեն կապելով այդ ակտիվացումը Թուրքիայի ռազմական համագործակցության հաստատման հետ հեղինակը նշում է, որ Անդրկովկաս - Միջին Արևելք տարածաշրջանի ժողովուրդների մեծամասնությունը ընկալում է այդ համագործակցությունը որպես «լուրջ վտանգ իրենց ազգային անվտանգությանը և շահերին» և ունեն բացասական դիրքորոշում նրա նկատմամբ: Համոզեցուցիչ է հնչում հեղինակի համակողմանի և մանրակրկիտ վերլուծության արդյունքում կատարված եզրահանգումը. «Անդրկովկասյան - Միջին Արևելյան աշխարաքաղաքական տարածաշրջանը իրականություն է և կարևոր դեր է կատարում ժամանակակից միջազգային հարաբերություններում»: Մնում է սպասել, երբ Նիկոլայ Յովհաննիսյանի արժեքավոր գիտական վարկածը լույս կտեսնի մենագրության տեսքով և հայերենով:

2002

ბ ე მ ე მ ე

ЗНАЧЕНИ ИЗУЧЕНИЯ АРМЯНО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЙ ДЛЯ СОВРЕМЕННОЙ ТЕОРИИ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ: НЕКОТОРЫЕ ПРЕДВАРИТЕЛЬНЫЕ ЗАМЕЧАНИЯ

Армяно-турецким межгосударственным отношениям конца XX — начала XXI веков “не повезло” дважды: как факту действительности, так и объекту исследования. Поясним нашу мысль.

В реальной жизни они хоть и существуют: два соседних государства “признают” существование друг-друга, время от времени присходят контакты между официальными представителями различных уровней, включая президентов и министров иностранных дел и ведутся переговоры, однако до сих пор они не получили своего легального оформления с точки зрения международного права — дипломатические отношения не установлены; то есть строго говоря, в системе современных международных двусторонних отношений они как бы не существуют. К тому же, одна из сторон — Турция — в одностороннем порядке осуществляет фактическую экономическую блокаду, а также ввела специальный визовый режим в отношении Армении, который она то ужесточает, то вводит определенные послабления в зависимости от... результатов обсуждения проблемы геноцида армян в парламентах третьих государств.

Не лучше обстоит дело и с исследованием проблем армяно-турецких отношений.²⁹ Фактически отсутствуют работы, в которых они анализировались бы с применением понятийного аппарата, используемого в современной науке о международных отношениях. К сожалению, отсутствует также сколь-нибудь полное фактологическое исследование истории армяно-турецких межгосударственных отношений, даже их отдельные периоды не получили адекватного отображения в специальной литературе с точки зрения “голой” фактографии, не говоря уже о монографии, в котором проявился бы комплексный подход. Авторы существующих работ решают прежде всего задачу оправдания кое-каких узконациональных или узкопартийных подходов к этой сложной и многослойной проблеме. Получила также распространение практика их рассмотрения только в контексте изучения Карабахского конфликта. В результате, предлагаемые в специальной литературе интерпретации армяно-турецких отношений являются в целом односторонними и поверхностными.

Между тем, даже из краткого описания в начале статьи состояния армяно-турецких межгосударственных отношений становится очевидной их безусловная “ценность” в качестве объекта исследования в рамках подхода “case-study” — с целью их дальнейшей генерализации и включения в каталог конкретных случаев, которыми оперирует современная теория международных отношений. Отметим две ее области, для которых, по нашему мнению, история

отношений между Арменией и Турцией последнего десятилетия представляет несомненный интерес.

Это прежде всего такая новая, на наших глазах формирующаяся область, как изучение методов и способов осуществления "неконвенциональной дипломатии" или, выражаясь более конкретно, исследование двусторонних отношений между государствами в условиях отсутствия дипломатических отношений. Казалось бы, армяно-турецкие отношения могли бы послужить одним из основных "случаев" (case), используемых для теоретических обобщений. Однако исследователями опыт армяно-турецких отношений в целом игнорируется. Характерным является следующий пример: в новаторской по своей сути в этой области работе профессора Лейкастерского университета Г. Р. Бэрриджа "Разговаривая с врагом", положившей начало исследованиям в этой области, отсутствует обращение к опыту армяно-турецких отношений, хотя и автор в числе других случаев использования присутствия на официальной церемонии похорон видного государственного деятеля для осуществления контактов между руководителями государств, не имеющих дипломатических отношений, упоминает визит президента Армении Л. Тер-Петросяна в Анкару по случаю похорон президента Турции Т. Озала¹. Между тем, рассмотрение особенностей армяно-турецких отношений позволило бы автору не только расширить, пользуясь терминологией самого Бэрриджа, список "ключевых методов коммуникации", используемых сторонами, но и "рассмотреть более пристально формальные и существенные обстоятельства, которые делают необходимым обращение к ним"².

Так, вся концепция и структура книги английского ученого основываются на допущении, что государства могут не иметь дипломатических отношений или в результате не признания друг друга, или в результате разрыва дипломатических отношений³. Тем самым им устанавливается прямая зависимость между признанием нового государства и установлением дипломатических отношений. "Во всяком случае, - пишет Бэрридж, если в признании нового государства или нового правительства отказано по какой-либо причине, дипломатические отношения, конечно, не могут быть установлены; точно также, если признание взято обратно, то дипломатические отношения, если они существовали, должны быть приостановлены"⁴. В результате, он фактически исключает из своего рассмотрения такой случай, как отказ от установления дипломатических отношений при официальном признании нового государства - то есть тот "операционный код"⁵, который выработало руководство Турции в отношении Армении еще в 1991 году и который оно сохраняет до сих пор. Тем самым, поле анализа автора сужается до рассмотрения только двух случаев: непризнания государства и разрыва дипломатических отношений.

¹ G. R. Berridge, *Talking to the Enemy: How States without 'Diplomatic Relations' Communicate*. New York, 1994.

² Ibid., p. XVI.

³ Ibid., p. 1.

⁴ Ibid., p. 3.

⁵ Термин был введен в практику международных исследований Александром Джорджом. См.: A. George, *The "Operational Code": A Neglected Approach to the Study of Political Leaders and Decision-Making*. - *International Studies Quarterly*, 1969, 13, p. 190-222.

Между тем, отмеченный нами выше случай имеет ряд принципиальных отличий от оказавшихся в центре внимания Бэрриджа. В частности, избравшее такую политику государство получает не только значительное стратегическое преимущество перед “новым государством”, ставя установление дипломатических отношений в зависимость от выполнения неких предварительных условий, но и официально признавая существование этого “нового государства” оставляет за собой возможность установления с ним и поддержания “неконвенциональных контактов” на самых различных уровнях, включая высший, используя их в конечном итоге с целью оказания давления на него. В случае непризнания “нового государства” каналы “неконвенциональных контактов” были бы в значительной степени перекрыты, что уменьшило бы возможности для дипломатического маневрирования, а в конечном счете — для оказания давления на него.

С другой стороны, официально признанное “новое государство”, с которым не установили дипломатические отношения, оказывается в затруднительном положении, к стати, более затруднительном, чем если бы сначала дипломатические отношения были бы установлены, а лишь затем в одностороннем порядке разорваны. Испытывая вполне понятный недостаток в опытных дипломатах такое государство лишается также возможности сбора информации посредством посольства и консульств, а также возможностей их посредством установления контактов с представителями различных слоев общества. Все это приводит к тому, что в случае поддержания “неконвенциональных дипломатических отношений” оно вынуждено действовать как бы “вслепую”, что еще более ослабляет его позиции в диспуте с противной стороной, которое, обычно, представлено более сильным и уже состоявшимся государством.

Прочерченная выше лишь пунктирно парадигма отношений была выведена нами на основе обобщения опыта отношений между Турцией и Арменией. Она не имеет аналогов в современной практике дипломатических отношений. Своеобразие армяно-турецких отношений станет более наглядным после краткого обзора рассматриваемых в научной литературе случаев отсутствия межгосударственных отношений.

Государства в наши дни в отношении друг друга применяют главным образом или политику непризнания, или политику разрыва (заморозжения) дипломатических отношений. “Классическими” случаями непризнанных государств в годы “холодной войны” были разделенные государства: Германия, Вьетнам, Корея. До сих пор большинство арабских государств не признают существование государства Израиль. В последние десятилетия получил распространение модифицированный вариант непризнания — непризнание не государства, как такового, а правящего режима (правительства). Особенно часто такую политику применяли Соединенные Штаты, а также под их давлением — их союзники. Так, США многие годы не признавали коммунистический режим Пекина в качестве законного правительства Китая.

Вместе с тем, как показывает обращение к практике международных отношений, значительно большее распространение в новейший период времени получил разрыв дипломатических отношений при одновременном сохранении "признания" данного государства или даже политического режима. Согласно традиции, кодифицированной Венским конгрессом 1815 года, разрыв дипломатических отношений воспринимался как символический акт признания невозможным разрешения конфликтной ситуации между государствами мирными средствами и скорого начала военных действий. Вся история периода "классической европейской дипломатии" позапрошлого века полна примерами подобного рода. И в наши дни время от времени акция разрыва или замораживания дипломатических применяется в непосредственной связи с началом военных действий, как, например, поступила Великобритания в отношении Аргентины в период Фолклендской войны. Однако в современный период или в эру "новой дипломатии"⁶ разрыв дипломатических отношений служит чаще всего актом, символизирующим недовольство политикой данного государства и направлен на его изоляцию на международной арене, особенно, если он применяется сильным государством в отношении более слабого, или же преследует пропагандистские цели; причем, в реальной дипломатической практике обе эти цели зачастую совмещаются. Приведем в качестве примера разрыв Соединенными Штатами дипломатических отношений с правительством Кастро на Кубе, которое, тем не менее, не сопровождалось отказом не только от признания кубинского государства, но даже от признания режима Кастро⁷. Подобный подход США был обусловлен, на наш взгляд, их стремлением оставить дверь открытой для последующих "неконвенциональных" контактов с представителями коммунистического правительства Кубы с целью попытаться добиться благоприятных для себя изменений. Важную роль сыграл, несомненно, фактор географической близости Кубы к США, что обуславливает его особое значение даже для такой мощной державы, как Соединенные Штаты. Интересно отметить, что в одном из своих выступлений тогдашний президент США имплицитно оправдывая подобную политику вынужден был даже публично солгать, заявив что США не признают правительство Кастро. Политика Турции в вопросе дипломатических отношений с Арменией оказывается наиболее близкой именно к политике США в отношении к Кубе, имея, однако, существенное отличие от последней; а именно, она с самого начала отказалась установить с Арменией дипломатические отношения, обусловив их установление рядом предварительных условий, касающихся других пунктов повестки дня в отношениях между этими двумя государствам, по которым ей не удалось добиться удовлетворяющих ее уступок со стороны Армении. Подобный подход турецкой стороны основывался на убеждении, что Армения, как "новое государство", к тому

⁶ Термин "новая дипломатия" применяется нами в соответствии с подходом, разработанным Сассоном Софером. См.: Sasson Sofer, *Debate Revisited: Practice Over Theory?* – In: *The Theory and Practice of International Relations*. Eighth Edition. Edited by: William Clinton Olson, Englewood Cliffs (New Jersey), 1991, p.65-78.

⁷ См. об этом: C. Warbrick, *The New British Policy on Recognition of Governments*, *International and Comparative Law Quarterly*, 1981, Vol. 30, p. 569.

же, не имеющая выхода к морю, находящаяся в состоянии военного конфликта с Азербайджаном и испытывающая значительные экономические трудности, больше ее заинтересована в установлении дипломатических отношений. Таким образом, можно утверждать, что Турция, фактически, использовала свое возможное согласие на установление дипломатических отношений с Арменией в качестве "средства влияния" в понимании исследователя проблем международного влияния (influence) Джеймса Дэвиса⁸. Однако до сих пор, по прошествии почти десяти лет, дипломатические отношения между Турцией и Арменией не установлены. Это означает, значительные расхождения между ними остаются, и Турции не удалось добиться от Армении существенных уступок, то есть вовлечь ее в сферу своего влияния.

В более широком смысле, отношения между Турцией и Арменией представляют определенный научный интерес также с точки зрения дальнейшего развития теории межгосударственных двусторонних отношений, которая в условиях усиления в последние годы влияния неолиберальных и мондиалистических теорий оказалась на периферии интереса исследователей. Между тем анализ армяно-турецких отношений в контексте такого фундаментального понятия этой теории, как мощь ("power") государства и способы ее реализации, или концепция принуждения мог бы способствовать ее дальнейшему развитию.

